ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 2 *Общественные науки*

Ա. Ցերերյան

ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ

ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՏԻՊԵՐԻ ԷՊՈԽԱՆ

Իր գրական գործունեության սկզբից մինչև վերջը Շիրվանզադեն ընդգրկել է հայ կյանքի զարգացման մի հիսունամյա շրջան։ Առաջին հայացքից թվում է, թե նրա հիմնական ուշադրությունը դրավել է հայ ընտանիքի պրոբլեմը,—հենց այդպիսի մի կարծիք էլ արտահայտվել էր մեր գրական քննադատության մեջ։ Ասես թե մեզանում Շիրվանզադեն կենսագործել է Եվրոպայում, և հատկապես գերմանական գրականության մեջ տարածված մի ժանր, որը կոչվում է ընտանեկան վեպ (Familienroman)։ *Ո՞րն է այդ ժանրի հիմնական առանձնահատկությունը։ Այդ մասին գրականության պատմագիր Վ. Շերերը գրում է. «Դա ընդգրկում էր մասնավոր կյանքի սովորական ընդհարումները, որոնում էր առօրյա իրականությունն իր ազնիվ զգացումներով, իր բարի գործերով, իր գեղեցիկ մարդկայնությամբ, սակայն դրա հետ միասին իր ազնիվ կարիքով, իր արատով և իր դոեհկությամբ։ Նա ապրում էր մի տարերքով, որից խորշում էր Շիլլերը»* (տես W. Scherer, Geschichte des deutschen Literatur, 1921, S. 521)։ *Ահա հենց շիլլերիզմի բացակայության հետևանքով մեղադրվել է Շիրվանզադեի ստեղծագործությունը։ Լեոն այդ առթիվ գրել է հետևյալը. «հեղինակը (=Շիրվանզադեն) մեծ մասամբ հեռու է ժամանակից. այժմեություն ունեցող հարցեր ու տիպեր չկան նրա գրչի տակ, փոքր ի սատ ունեցողներն էլ միանման են։ Գատճառը, մեր կարծիքով, նյութի ընտրությունն է. պ. Շիրվանզադեն չէ կարողանում դուրս գալ կախարդական մի նեղ շրջանից։ Սերն է այն միակ դրդիչը, որ շարժել է տալիս նրա հերոսներին, ավուսնական անհավատարմության, կնոջ ազատության հարցերի շուրջն է պտտում ամեն ինչ» (տես Լեո—«Ռուսահայ գրականությունը սկզբից մինչև մեր օրերը», 1904, էջ 325)։ Քննադատի այս կարծիքը չի համապատասխանում իրականությանը։*

Բացի կանանց հարցից՝ Շիրվանզադեն շոշափել է նաև հայ կյանքի այսպիսի պրոբլեմները, որոնք խորապես սոցիալական և քաղաքական բնույթ ունեն, այսինքն «Շիլլերի տարերք» են պարունակում և չեն համատեղվում «ընտանեկան վեպի» սահմաններում։ Բացի դրանից՝ Շիրվանզադեի ստեղծագործության մեջ իրենց արձագանքն են գտել հայ կյանքը հուզող մի շարք պատմական իրադարձություններ, որոնք հիմնովին կապ չունեն սիրո և կնոջ հետ։ Կարելի է թվել այդ իրադարձություններից մի քանիսը։ Ամենից առաջ Շիրվանզադեի նկարագրած էպոխան, մանավանդ դրա քառասնամյա շրջանը, 1880—1920, հայ կյանքի, ավելի ճիշտ՝ Անդրկովկասի կապիտալիստական զարգացման պերիոդն է, մի պերիոդ, որ իրենից ներկայացնում է «կապիտալի պատմությունը», այսինքն «բռնության

և թալանի, արյան և կեղտի պատմությունը» (տես В. И. Ленин, Соч., т. XVIII, 82)։ Ինչպես հայտնի է, մինչև անցյալ դարի 70-ական թվականները Անդրկովկասյան կապիտալն ուներ կապալառական, առևտրական և վաշխառական բնույթ։ Հետո առևտրա-արդյունաբերական, դրա հետ միասին զարկ տալով նաև բանկային գործին։ Շիրվանզադեի երկերում երևում է այդ պատմական դարձը. այսինքն շահագործման «ապերական ձևերից» անցումը «բարձր» տեխնիկական գործելակերպին։ Նույնիսկ Շիրվանզադեի երկերում ակնարկ կա այն մասին, որ ֆեոդալիզմի քայքայման հողի վրա է ուռճանում կապիտալի թագավորությունը և սկսվում է այն գարաշրջանը, որ «մարդակերների քաղաքակրթություն» է անվանել հրնդիկ մեծ բանաստեղծը — Թագորը։ Էպիկական ձևով է սկսում Շիրվանզադեն իր նկարագրած վայրագ շահագործողի՝ Բաղդասարի բնութագիրը. «Այստեղ էր բնակվում Զիլգիլ քաղաքի հայտնի վաճառական Բաղդասարը, պարսից վերջին խանի ախոռապետի՝ Ահրումի թոռը» (տես Երկեր, I, 79)։ Վերջիվերջո ախոռապետ Ահրումի թոռը դավառական քաղաքում առևտրական կարիերա անելով, իր որդու առաջ ճանապարհ է բաց անում դեպի արդյունաբերական Բաքուն, որ իդեալական նպատակակետ էր նաև Գալուստյան եղբայրների համար. «Բաքուն,— դրում է Շիրվանզադեն,— ծովեզրյա այդ նորածագ քաղաքը, նավթային արդյունաբերության շնորհիվ, այն ժամանակ արդեն Անդրկովկասյան երկրի առևտրական կենտրոններից մեկն էր։ Ինարկե, զարմանալի կլիներ, եթե աղա Գալուստյանների նման ճարպիկ վաճառականները դործ չսկսեին այնտեղ» (նույն տեղ, էջ 66)։ Ինչպես տեսնում ենք, Շիրվանզադեն շոշափում է տնտեսական զարգացման երկու ծայրերը ևս։ Մի օրինակ ևս. Մարտիրոս Հախվերդյանը հարբսացել է պետական կապալներ վերցնելով Անդրկասպյան երկրում, հարբստանալուց հետո նա էքստազի մեջ ընկնելով, շարունակ կրկնում է. «Բաքու, Բաքու, ուրիշ ոչ մի տեղ» (նույն տեղ, էջ 139)։ Շիրվանզադեն նկարագրել է ոչ միայն առևտրական կուտակումների արդյունաբերական ելքը, այլև արհեստի, համքարության քայքայումը։ Դա պարզապես նշված է «Գործակատարի հիշատակարանը» վիպակի մեջ, ուր ասված է, թե՝ «արհեստը բացի նրանից, որ նյութապես չի ապահովում մարդուս, մինչև անդամ բթացնում էլ է նրան» (նույն տեղ, էջ 23)։ «Զար ոգի» դրամայի մեջ Շիրվանզադեն արհեստավոր Ոսկանի հարբեցողության հիմնական պատճառը համարում է նրա տնտեսական քայքայումը. «Խմիր, լաց չես լինիլ,— ասում է Ոսկանը,— ես էլ առաջ լաց էի լինում, հիմա աչքերս ցամաքել են» («Երկեր», V, 308)։ Քայքայվող արհեստավորների մի մասը դնում է դեպի գործարան, մյուս մասը դեպի վաճառատուն։ Շիրվանզադեն նկարագրել է իր երկերում թե մեկ և թե մյուս վայրը։ Գործակատարների շահագործումը տերերի կողմից, նրանց իրավազուրկ վիճակը, ապա՝ նույն գործակատարների թշնամական վերաբերմունքը տերերի հանդեպ — թե մեկ և թե մյուս խնդիրը Շիրվանզադեի ուշադրության կենտրոնումն է եղել տարիներ շարունակ։ Բանվորների վիճակը ևս չի խուսափել Շիրվանզադեի աչքից։ Ինչպես որ Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունների մեջ նկարագրված է գյուղի հետ կապված հայ աշխատավորի վիճակը և այդտեղից մինչև նրա պրոֆեսիոնալ բանվոր դառնալու պրոցեսը, այնպես էլ Շիրվանզադեն տեսել է այդ նույն զարգացման ընթացքը։ Տեխնիկապես հե-

տանեաց գործարանը, հակասանիտարական վիճակ, հաշվանգամություն, այնուհետև դրության այս կամ այն չափով փոփոխումը։ Մի ծայրում կանգնած է «Հրգեհ նավթագործարանում» պատմվածքի «ասիացի» գործարանատեր Մարությանցը, մյուս ծայրում՝ «եվրոպացի» արդյունաբերող Ամրատ Ալիմյանը, կամ Բաղրատ Էլիզբարյանը։ Նախ՝ առաջինի գործարանի հանրակացարանը. «այստեղ,— գրում է Շիրվանզադեն,- ուր ապրում են 10-15 մշակներ, օդը տարիներով չի փոխվում, այստեղ հատակը հողային է, պատերը խոնավությունից բորբոսնած, առաստաղը սարդի թանձր ոստայնով սքողված, այստեղ անկարելի է երևակայել անգամ առողջապահական որևէ կանոնի հնարավորությունը» («Երկեր», VIII, 135)։ Ալիմյանը նոր տիպի հանրակացարան է շինել տալիս. բայց հիմնականում չի փոխվում կապիտալիստի և բանվորի փոխհարաբերությունը։ Այդ հանգամանքը շեշտել է Շիրվանզադեն հետևյալ դիտողությամբ.—լուսաբացին բանվորները դնում են աշխատանքի, իսկ նրանց տերերը շարունակում են իրենց քեֆը. «ազնիվ աշխատանքը և ձրիակերությունը» կանգնած են դեմ առ դեմ («Երկեր», VII, 82)։

Հայ գյուղացիության վիճակը ևս Շիրվանզադեն համարել է իր ուսումնասիրած էպոխայի առաջնահերթ խնդիրներից մեկը։ Առաջին նվազ նա նկատել է հայ գյուղացու քայքայման պատճառներից մեկը. «օգտվելով այն հանգամանքից,— գրում է Շիրվանզադեն,— որ գյուղացիները առհասարակ դարձան ժամտնակը փողի մեծ պակասություն են զգում և ունենալով միշտ պատրաստի դրամագլուխ, ազա Գյուլամիրյանները ամեն տարվա այդ ժամանակին գյուղացիներին կանխիկ վճարում են ահագին տոկոսներով փողեր և պարտավորեցնում նրանց գրավոր կապակցություններով. որ նրանք աշնան այգիներից գոյացած խաղողը կամ պատրաստի գինիները ծախեն իրենց վրա։ Գինու կամ խաղողի գինը նշանակում էին իրենց ցանկացածի համեմատ» («Երկեր», I, 37)։ Այս երևույթը նկատել է նաև Գերճ Պոոշյանը. կապիտալի շոշափուկները գյուղը մտնելով, ծծում են գյուղացու կենսական աղբյուրները։ Ոչ միայն պարտքերի տակ ընկնող գյուղացուն, այլև առևտրական խաբեության ենթարկվող գյուղացուն է տեսել Շիրվանզադեն, որի նուրբ դիտողությունները համընկնում են մեր մյուս գյուղագիրների տվյալներին։ Խոսելով կալվածատեր Մարգար աղայի կառավարիչ Սարքիսկի մասին, Շիրվանզադեն գրում է. «Գյուղացիները աղի արցունք էին թափում այդ մարդու անունը լսելիս» («Երկեր», III, 73)։ Շիրվանզադեն նկատել է նաև հայ գյուղի հավիտենական չարիքը— սակավահողությունը, ապա հայ հողի աննպաստ երկրաբանական բնույթը, վերջապես, ճանապարհների չգոյությունը. «Նրանք անցան մի դյուղով,— գրում է Շիրվանզադեն Դիմաքսյանի և Հարիգյանի ճամբորդության մասին— որի բնակիչները հողի պակասությունից ազատվելու համար պատրաստ էին իրենց հարազատ գավակներին գրավ դնել, ինչպես ասում էր Հարիգյանը։ Անցան անբերրի, քարքարոտ հողերով, ուր գյուղացին զերբնական աշխատանք էր գործադրում իր օրական պարենը վաստակելու համար։ Մի գյուղացի մի ուրիշ գյուղ անցնելու ժամանակ Հարիգյանը ցույց տվեց խորտուբորտերով լի նեղ ուղին, և նկարագրեց այն բոլոր փնասներն ու չարիքները, որ առաջանում էին կանոնավոր ճանապարհների բացակայությունից» (նույն տեղ, էջ 265)։ Նույն գյուղացու աղքատությունը նկա-

բազրելով, Շիրվանզադեն դեռ հետ միասին պատժում է, թե ինչպես ազնվականները իրենց հորտերի քրտինքի արդյունքը լափլիզում են պորտաբույծ կյանքի մեջ, շռայլում են եվրոպական մայրաքաղաքներում (տես «Կյանքի բովից», Երկրորդ մաս, էջ 137)։ Իր համբորդական երկերից մեկում Շիրվանզադեն խոսել է կալվածատեր իշխան Բարաթովի մասին, որ «հետզհետե խլում է գյուղացիների հողերը և նրանց աղքատացնում» («Երկեր», V, 27)։

Բայց կալվածատիրությունից ավելի շատ՝ Շիրվանզադեի ուշադրությունը գրավել են բուրժուազիան և բյուրոկրատիան, որոնք նրա երկերում ստացել են տիպական պատկերացում։ Երկուսի նկատմամբ ես նա ցույց է տվել պատմական մոտեցում։ Շիրվանզադեն ցավել է, որ մի շարք հրապարակախոսներ հայ կապիտալիստների անարգ շահագործման համար մեղադրել են ողջ հայ ժողովրդին, որ հիմնական իր մասսայով շահագործվել է հենց «հայրենի» բուրժուազիայի կողմից (տես «Երկեր», II, 36)։ Հայ բուրժուազիայի բնութագրման ժամանակ Շիրվանզադեն պատմականորեն տալիս է նրա զարգացման երկու էտապը։ Սկզբում անսանձ շահագործում. ոչ մի գիժադրություն չտեսնելով, հայ բուրժուազիան, ինչպես կասեր Մարքսը՝ գործադրում է «բաց, անամոթ, ուղղակի, չոր շահագործման ձևեր»։ Բայց հետո դիմադրության հանդիպելով՝ նա դառնում է ճկուն, դյուրաթեք, հաճախ դիմում է կրոնական և քաղաքական ծածկույթի օգնության, քողարկելով իր թալանը բարեգործության դիմակի տակ։ Հատկապես Շիրվանզադեն շատ է ծաղրել բուրժուական բարեգործությունը։ Իր նշանավոր տրակտատի՝ «Բնակարանային հարցի» մեջ Էնգելսը ցույց է տվել, որ համաճարակների զարգացումը բուրժուազիային դրդում է բարեգործական փչրանքներ նետելու «վախից զրգված»։ Բուրժուազիայի այդ առատաձեռնությունը Մարքսն անվանել է «բարեգործական դոնքիշոտություն»։ Շիրվանզադեն ևս, ինչպես և Ալ. Ծատուրյանը, ցույց է տվել, որ հարուստը մեկին գուլպա է նվիրում, իսկ մյուսի շապիկն է հանում։ Այսպես, օրինակ, Մակար աղա Գուլամյանը իր տված մուրհակները զողանում է մեռնող պարտատիրոջ գլխատակից («Երկեր», I, 52)։ Գավառական հարուստը մուրակներ է թալանում, իսկ նույն ժամանակվա (ուսանողական թվականների) կապիտալիստ-արդյունաբերողը իր բանվորների կյանքն է դնում գործարանային հրդեհին՝ դրամ խնայելով հրշեջ գործիքների համար (նույն տեղ, 130)։ Կրոնական դժոխք և արքայություն հասկացողությունը Շիրվանզադեն տվել է սոցիալական բողոքի շեշտով. «Մի տեղ խոնավ բնակարան, տկլոր ընտանիք, մերկ զավակներ, վիշտ, տանջանք, դառնություն, մի կտոր հացի համար գիշեր-ցերեկ պատերազմ հազար տեսակ խոչընդոտների հետ, քաղդածություն, սով, հիվանդություն և կեղտոտություն։ Մյուս տեղ շքեղ տներ, հարուստ այգի, կուշտ և առողջ ընտանիք, ուրախություն, հարստություն, գվարճություն, անհոգ կյանք և շռայլ ապրուստ--ահա՝ ինչ տեղ է դժոխքը և արքայությունը» (նույն տեղ, էջ 35)։

Ճիշտ է, այդ սոցիալական բողոքն արտահայտում է գործակատար «Ցորդա Խաչին» այսինքն մի մարդ, որ կապիտալի գպրոցում հետզհետե «փչանում էր»։ Բայց նա այդ բողոքն արտահայտում է ուսումնառության սկզբում, երբ նրա հոգու մեջ դեռ թարմ էր իր fայfայված արհեստավոր հայրիկի տրաժադրությունը։ Հանձին Ցորդա Խաչու, Շիրվանզադեն ավել է

հարստություն դիզելու տիպական պատմությունը։ Բուրժուազիան եղվիաներից փոխ է առնում նրանց հիմնական սկզբունքը.—նպատակը արդարացնում է միջոցը։ Ծորդա Ֆաչին ասում է. «Ինչու չգնալ ծուռ ճանապարհով—քանի որ կարող ես հասնել բախտավոր և նախանձելի ապագայի։ Ծուռ ճանապարհով գնացողները հաջողում են, հարկավ, ուրիշների հաշվին։ Վերջիններս ակնապիշ սպասում են, թե երբ պետք է նրանք «փսխեն իրենց կերածը»։ Բուրժուազիայի գործակիցն է փաստաբանների խավը, որ Շիրվանզադեի ստեղծագործության մեջ հանդես է բերված ընդհանուր առումով բացասական գծերով։ Տիկին Բախտամյանը փաստաբան Վեքիլյանին ավազակապետ է անվանում. դա մի մարդ է, սակայն, որ «հրացանի ու դաշույնի աեղ գործ է ածում գրիչ և խորամանկություն» («Երկեր», III, 214)։ Կապիտալիստների աշխարհում արյունակցության և հարազատության գաղափարը այլևս տոն տվող երևույթ չէ. տակավին Սունդուկյանը ցույց էր ավել, թե ինչպես Ֆամփերին խաբում է իր քրոջ ազգային։ Շիրվանզադեի Բարխուդարը նկատում է. «Մտիկ եմ տալիս հիմիկվա աշխարհին, մտիկ եմ տալիս հիմիկվա եղբայրներին ու ողորմի եմ տալիս մորս հոգուն, որ նա ինձ համար եղբայր չի ծնել։ Ո՞վ է իմանում, նա էլ ինձ համար ուրիշների եղբորց նման եղբայր կլիներ, Ֆր հիմա փողի համար իրարու գլուխ են ծակում» («Երկեր», IV, 25)։ Կամաց-կամաց կապիտալիստները յուրացնում են հորատաեր ազնվականների փափկակեցության, սիբարիտության ձևերը, որ այնքան տաղանդով նկարագրել էր Գոնչարովը։ «Թաթոսը, (=Հալաբյանի ծառան), սենյակի մեջտեղում կանգնած, ձեռները կրծքին դրած սպասում էր։ Նա պետք է հաներ աիրոջ կոշիկները, հագցներ հոգաթափները, երկար ծխաքարշը տար նրան, սպասեր մինչև ծխել վերջացնելը, ճանապարհ գներ հաշարան, և այնուհեաև միպչև ազատ էր» (նույն աեղ, էջ 195)։ Շիրվանզադեն ակներև փաստերով ապացուցել է, որ բուրժուական կեցությամբ որոշվում է նաև բուրժուական մտածողությունը։ Թե իր բարոյահայեցողությամբ, ինչպես նաև իրավահայեցողությամբ նա դառնում է ֆորմալիստ. մի իրողություն, որ ակներև կերպով ցույց է տալիս Շիրվանզադեի ինտելիգենտներից մեկը՝ Նազիմյանը. «Բարոյականություն ասված բանը շատ առաձգական հասկացողություն է։ Նա իսկապես ձև է և ոչ նյութ, իսկ ձևերը տարբեր են լինում։ Հասարակությունը աչքերով է դատում։ Նրա համար բարոյական է ամեն ինչ, որ արտաքուստ վայելուչ է։ Բավական է, որ նրա տեսողությունը չվիրավորես, նա չի աշխատիլ ներքինդ թափանցել։ Բայց եթե վերարկուիդ օձիքը մաշված է, նա կկարծե, որ ներքնահագուստդ կեղտոտ է։ Ամեն բան ձևի վրա է հիմնված» («Երկեր», V, 80)։ Այստեղից մինչև բուրժուական դեմոկրատիան, «հավասարության» ֆորմալիստական թեորիան մի քայլ է։ Ասում են՝ ֆրանսիական 1789 թվի ռևոլուցիայի ժամանակ մի պլակատի վրա գրված է եղել «Հավասարություն և... սեփականություն»։ «Թաթոս» վեպի մեջ սեփականության և... հավասարության իդեոլոգը ժամանավոր փաստաբան Մարությանն է։ Նա ասում է՝ բոլորի առաջ բացված է հարստանալու ճանապարհը։ Հաբուստ եղեք—ահա՝ միակ հրամայականը. «Տասը տարի առաջ,—ասում է նա,—ես մի նոտարիուսի օգնական էի... այժմ կես միլիոն կարողություն ունեմ» («Երկեր», VII, 114)։ Եթե փող ունեք, բարոյական էլ կլինեք, նաև իրավացի, կամ ձեզ կհռչակեն և՛ մեկ, և՛ մյուս իմաստով. սա է արդ-

գյուղացիների փիլիսոփայությունը, նրա ֆորմալ էթիկան։ «Ուզում եմ ասել,—եզրափակում է իր կենսահայեցողությունը հիշված մասնավոր փաստաթանը,—բառի իսկական նշանակությամբ աղնիվ վաճառականն այնքան հաղվագյուտ է, որքան չկողացող խոհարարը» (նույն աեղ, էջ 287)։ Աղնիվ վաճառական Էլիզբարովը կողանում է մոտ մեկ միլիոն ռուբլու մի կարողություն և մեռնում է անպատիժ։ Բայց հենց նույն այդ միջոցին ոստիկանները ձերբակալում են մի նոր Ժան Վալժանի, որ իր քրոջ քաղցած մանուկների համար գողացել է մի կտոր հաց։ «Մեղքը այն ժամանակ է մեղք, երբ հայանի է հասարակությանը», այսպես է արդարացնում Էլիզբարովին Սարգիսը («Երկեր», V, 251)։ Իր մեծուարների մեջ բուրժուական էթիկայի բնագավառից մի ցայտուն նմուշ է բերում Շիրվանզադեն, գրելով. «Վտանգավոր մալտ ամսին շոգենավային ընկերության վարչությունը իր նորագույն նավերը չէր վստահում «ոիժ» Կասպյանի քմահաճույքին հանձնելու և միայն իր հին ու անպետք նավերն էր ծով նետում» («Երկեր», VIII, 110)։ Այսինքն՝ ծով էր նետում նաև... իր ծառայողներին։ Լավ է ասել Շիրվանզադեն մեծագրպան և հոգով աղքատ բուրժուազիա, որի բարոյական բնութագիրը, նա տալիս է. ասես, ձայնակցելով Մ. Գորկուն. «Այդտեղ (=Բաքվում) էր, որ տեսա գայլի ախորժակով, վագրի ժանիքներով, բարեկամը բարեկամի դեմ դնված, եղբայրը եղբոր դեմ, հայրը որդու դեմ։ Դրսից գիտողին թվում էր, թե ընկել է մի տեսակ գազանանոց, ուր ամենքը անոթությունից կատաղել են և պատրաստ են իրարու կոկորդը կրծոտել» (Նույն տեղ, էջ 275)։

Եվ ահա, այդ հղփացած բուրժուազիային պաշտպանում էին մի կողմից՝ բյուրոկրատիան իր բռունցքով և գազանակով, մյուս կողմից՝ կղերականությունը իր աղոթքով և օրհնանքով, անեծքով և նզովքով։ Մի նախկին դավառապետ պարծենում է, ասելով. «Ճշմարիտ է, շատերին եմ ողգու տակ ճղճղացրել, մի քանիսն էլ մեռել են»։ Դա հայտնի Սամսոն բեկն է, գյուղացիների հոգեհանը, կալվածատերի և առևտրականների բարեկամը։ Գյուղացիների հետ միասին Սամսոն բեկերը իրենց ողգու տակ պահում էին նաև բանվորներին։ Ինչպես հայտնի է, բյուրոկրատական կառավարությունը 1897 թվին հայտարարեց թե բանվորական օրը 11 և կես ժամ պետք է լինի։ Սակայն բյուրոկրատական այդ խնամակալությունը ոչ թե նպաստեց, այլ խոչընդոտեց թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության զարգացմանը, Ռուսաստանը գնելով կիսապաղության վիճակում Եվրոպայի հանդեպ, որի հետևանքով, ինչպես ասում է Ի. Վ. Ստալինը՝ նրան խփում էին զորական հետամնացության համար, կուլտուրական հետամնացության համար, պետական հետամնացության, արդյունաբերական հետամնացության համար, գյուղատնտեսական հետամնացության համար։ Ռուս բյուրոկրատիայի նպատակն է եղել հաշտեցնել կալվածատիրությունն և բուրժուազիայի շահերը։ Ինչպես ցույց է տվել Լենինը, դեմոկրատական շարժումը կռվել է նրա դեմ, կռվել է հարկերի և սնկավանողության դեմ։ Այս վերջին կռիվը հատկապես սուր բնույթ է ստացել Անդրկովկասում։ Պորտ-Արթուրի անձնատուր լինելու կապակցությամբ Լենինը գրեց իր հռչակավոր գիտողությունը 1905 թվին, ռևոլուցիայի նախօրյակին. „Не русский народ, а самодержавие пришло к позорному поражению“. Ինչպես Մաքսիմ Գորկին, այնպես էլ Շիրվանզադեն գիտել են, որ բյուրոկրատիան

կանխամտածված կերպով թունավորում է ժողովրդին ալկոհոլով իր «մոնոպոլի» կրպակներում. «արաղի ծովը» երկուսն էլ համարել են մի չարիք և ըմբոստացել են դրա դեմ. «...մտնում էին մոնոպոլի կրպակները։ Այստեղ վերցնելով կնքված շիշերը՝ դուրս էին գալիս փողոց և բովանդակությունը դատարկում իրենց բիրանները... Եվ ահա նրա ողորմելի դոները թավալված էին կրպակների տոջև, ժայթքերի վրա, փողոցի մեջ տեղում՝ սայլերի և կառքերի տակ ջարդվելու վտանգին ենթակա» («Երկեր», I, 345)։ Առանձնապես ծանր էր ազգային փոքրամասնությունների վիճակը բյուրոկրատիայի լծի տակ։ Շիրվանզադեն քստմնելի գծերով է տվել հրեա ժողովրդի տառապանքը իր ստեղծագործության մեջ։ Սակայն բյուրոկրատիան ազգային փոքրամասնության մեջ ես ուներ իր դաշնակիցը դա բուրժուազիան էր։ Շիրվանզադեն գրում է. «Նայիր այն մյուսին. հայ է, ազատամիտ է համարվում, բայց տես ինչպիսի քծնող դեմքով է նայում իր մոտ նստած իշխանավորին... Պաշտոնի է սպասում։ Վազը նա կդառնա ժողովրդի թշնամին» («Երկեր», II, 377)։ Բյուրոկրատական հիմնարկների մեջ Շիրվանզադեն ամենից շատ վարկաբեկել է դատարանը, դատաստանական քաշքշուկը, կաշառքով ամեն ինչ անելու «արդարությունը»։ Կարդացեք հետևյալ անարդական նկարագիրը. «Ո՞վ պետք է քննի դատը, եթե ոչ նահանգական դատարանը։ Ահա հենց այստեղ է թաքնված շան գլուխը։ Բայց որից կամ ինչից են կախված մեր այժմյան դատարանի որոշումները։ Միայն հիմարները ու ապուշները են հավատում արդարադատությանը։ Իսկ ես, մոտից ճանաչելով դատարանի անդամներին, մեկիկ մեկիկ դիտեմ թե որքան է թույլ յուրաքանչյուրի ձեռքը։ Կաշառք - ահա մեծագույն զորություն...» («Երկեր», VII, 43)։ Դատարանի հետ միասին Շիրվանզադեն մերկացրել է նաև սպայական դասի, օֆիցերության արատները։ Մեկը դատությամբ նկատում է. «Այդ օֆիցերներն ամեն տեղ սկանդալներ են սարքում» (Նույն տեղ, էջ 74)։ Մի կողմից մտրակելով «դատաստանական խարդավանքների ճահիճը», մյուս կողմից՝ օֆիցերության սանձարձակությունը (հիշեք Պուշկինի «Փոստակայանի վարիչը»), Շիրվանզադեն իր ընթերցողներին հիշեցնում է դավառապետ Դուբազովի պատմությունը, որ «մի գյուղի բնակիչներին ամբողջ օրը պահել է անձրևի տակ չոքած և հետո ծեծելով սպանել երկու ծեր գյուղացու» («Երկեր», VI, 307)։ Ադմինիստրացիան և դատարանը խիստ լինելով խեղճերի հանդեպ, շատ մեղմ են վարվում, երբ նրանց առաջ կանգնում են «կարգի» պաշտպանները։ Դուք կարող եք ձեր կնոջը սպանել և ազատ արձակվել, եթե ցույց տաք, թե խանդի հողի վրա եք ոճիր գործել։ Շիրվանզադեն իր մեծուարների մեջ պատմել է այն մասին, թե ինքը պատանեկական տարիքում ստիպված է եղել դատարանում գրագիր լինել, ապա գզվելով թողել է. «Ահ՝, - բացականչում է նա,— իմ սրտի վրայից մի ծանր քար ընկավ կարծես, երբ զգացի, թե այլևս չպետք է ոտք դնեմ այդ նեխված մթնոլորտը։ Որքան և անփորձ էի, դիտեի, որ այդտեղ պիտի թմրեր առմիշտ իմ նոր արթնացած միտքը։ Ահ՝, այլևս ստիպված չէի օրը վեց-յոթ ժամ արտագրել մի բթամիտ պաշտոնյայի բորբոսնած ուղեղի արտադրությունները մի հսկայական ժանգոտ մեքենայի համար» («Երկեր», VIII, 107)։ Շիրվանզադեի երկերում արձագանք է գտել նաև հին ռեժիմի բանտային սիստեմի դժնդակությունը։ Տիրում էր ծեծ, հայհոյանք, հակասանիտարական վիճակ։ Ինքը՝ Շիրվանզադեն ևս վայելել է այդ «հա-

հույքներին» մի ժասը։ Իր բանտային նկուղը այսպես է նկարագրում. «Իժ սենյակի առաստաղն ու անկյունները ծածկված են սարդի հարյուրավոր ոստայնով, հատակի ճեղքերից ամեն վայրկյան լրբարար գուրս էին սողում մկները և ծվծվալով այս ու այն կողմ վազում, մազի չափ չվախենալով իմ ներկայությունից։ Երբեմն գիշերները ես զգում էի նրանց վազքը իմ երեսի վրա» (նույն տեղ, էջ 262)։ Իր բանտարկության ժամանակ Շիրվանզադեն ակամատես է եղել նաև այն բանին, թե ինչպես բյուրոկրատիան հալածում էր ռուս սեկտանտներին, հատկապես դուխաբորներին, որոնք հրաժարվում էին աջակցել կառավարության ռազմական մեքենային։ Իսկ ինչպես էին կերակրում բանտարկյալներին. միևնույն ամանը ծառայում էր թե կերակրի և թե ոտքեր լվանալու համար։ Շիրվանզադեն հալածվել է նաև իբրև հեղինակ ցենզուրական հետապնդումներով։ Առանձնապես «Քառասներեքը» ենթարկվել է ջնջումների։ «Վեպի մեջ ցենզուրական ջնջումներ եղել են,—գրում է Շիրվանզադեն,—միայն չեմ հիշում՝ որ մասերում։ Բանվորական կյանքը նկարագրելիս ձեռքս կաշկանդված էր...» (նույն տեղ, էջ 276)։ Այնուհետև Շիրվանզադեն փաստորեն ապացուցում է, որ հայ-թուրքական ընդհարումների ամենամեծ պատասխանատվությունը ընկնում է բյուրոկրատիայի վրա։ Վերջինս ժողովրդի համար ոչ միայն քաղաքական պատուհաս էր, այլև կուլտուրական կյանքի արգելակ։ 1915 թվին ճամբորդելով Երևանի նահանգում, Շիրվանզադեն գրում է. «Մի գիշեր էջմիածնում անց կացնելով, առավոտյան կառքով ուղևորվեցինք Իգդիր, ավելի ճիշտ կլիներ ասել՝ մտանք Կովկասյան աշխարհոչակ տիղմի մեջ։ Այո, պետք է արժանավոր հարկը տալ Երևանյան նահանգի ադմինիստրացիային, որ տարիների ընթացքում զարմանալի տաղանդ է գործադրել երկրի ճանապարհները ճանապարհորդների համար կատարելապես կորստաբեր դարձնելու համար» («Երկեր», V, 374)։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Շիրվանզադեի հայակրանքն ուղղված էր դաշնակիցների կողմը, նա ատում էր գերմանական իմպերիալիզմը։ Ի դեպ է ասել՝ Շիրվանզադեն առհասարակ չէր սիրում գերմանական յունկերներին և նրանց դաստիարակած մարդ-մեքենաներին։ Վերջիններիս պատկերացնում է նրա հերոսներից մեկը այսպես. «Գիտի նկարել տամ մի տղամարդ, հաստ փորով, մի ձեռին կալբաս, մյուս ձեռին պիվոյի բաժակ։ Նեմեցի պատկեր» («Երկեր», I, 140)։ Շիրվանզադեն բացասաբար է վերաբերվել նաև գերմանական կոլոնիսաներին. «Գերմանական գաղութն իր հավիտենապես դժկամակ դեմքով. կարծես, ամբողջ աշխարհը նրանց պարտական է ու չի վճարում իր պարտքը» («Երկեր», VIII, 101)։ Շիրվանզադեն մեղադրել է Վիլհելմ II-ին թե նախքան պատերազմը նրա ունեցած քաղաքականության և թե պատերազմի նախապատճառը լինելու համար. «Դա Վիլհելմ II-ի շովեն քաղաքականության շրջանն էր, երբ ամենավերջին գերմանացին մի փոքրիկ Վիլհելմ էր իր մտայնությամբ և զգացումներով» («Կյանքի բովից», 2-րդ մաս, էջ 7)։ Մի գյուղացու բերանով Շիրվանզադեն մեղադրում է նույն Վիլհելմ II-ին իբրև պատերազմի դրդապատճառ. «Սակայն գիտեմ Վիլհելմին ըրածը։ Ան եղավ հեղինակ սա սոսկալի պատերազմին։ Աշխարհը հրդեհեց իր փառքին համար։ Շատ պիտի զղջա» («Երկեր», V, 43[illegible])։ Սակայն Շիրվանզադեի հակագերմանական կողմորոշումը նրան չի դարձնում մի մարդ, որ աչք է փակում ցարական բյուրոկրատիայի թերությունների

առաջ։ Նա նկատում է, թե ինչ թշվառություններ է կրում գյուղացիությունը պատերազմի երեսից թե սահմանի այս և թե այն կողմում։ Նույն պատերազմին ժամանակցած Անրի Բարբյուսը քսաներորդ դարը «արյան դար» է անվանել և պատերազմի տվայտանքները նկարագրել իր հայտնի «Կրակ» վերնագրով մեծուարական վեպում։ Կղերականության դիրքը, առանձնապես Վատիկանի քաղաքականությունը պատերազմի ժամանակ հանդես եկավ իր ամբողջ մերկությամբ։ Բուրժուազիան նեղը ընկնելով, հաճախ է դիմել կրոնական հաշիշի, հոգեորականության օգնությանը։

Շիրվանզադեն ընդհանուր առումով հայ կղերի բարեկամը չի եղել։ Թե նրա ազգային քաղաքականությունը և թե ղեկավարած դպրոցական սիստեմը նա քննադատել է և թերություններ ցույց ավել։ Եվ եթե հանդուրժել է մեկին և մյուսին, դա արել է հարկից ստիպված։ Այսպես, օրինակ, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Շիրվանզադեն մի հոդվածի մեջ «բարձր» հոգեորականության գործունեության հետ ինչ որ հույսեր կապեց «հայոց հարցի» առնչությամբ, բայց նույն այդ հոդվածի վերահրատարակության ժամանակ նա այդ հույսերը կրճատեց։ Դրանով վերջացավ նրա ժամանակավոր համաձայնությունը կղերի հետ։

Գլեխանովն ասել է, որքան բուրժուազիտյի ոտքի տակի հողը տատանվում է, այնքան էլ նա իրեն «սուրբ» է ձեացնում։ Այս ժաքսիմը Շիրվանզադեի ստեղծագործության մեջ գեղարվեստական կոնկրետացում է ստացել։ Այսպես, օրինակ՝ կապիտալի նախնական կուտակման նրա նկարագրած առաջին ոահվիրաները շատ համարձակ վերաբերմունք են ցույց տալիս կղերի և քրիստոնեության նկատմամբ։ Վարդան Ահրումյանը գեռ իր աշակերտության ժամանակ, ասենք՝ վաթսունական թվականների սկզբում, ընկերոջ հետ վիճում է, հերքելով նրա կղերամտությունը. «Մյուս կյանքը ո՞րն է,—հարցնում է Վարդանը,—չեմ ուզում քո մյուս կյանքը։ Թող այս աշխարհում լավ ապրեմ, հետո ուր տանում են տանեն հոգիս։ Անխելք, եթե ուզում ես ճշմարիտն իմանալ, իսկի մյուս կյանք չկա էլ» («Երկեր», I, 132)։ Նույն Վարդանը կամ նրա նմանները՝ Բաքու տեղափոխվելով, դառնալով խոշոր արդյունաբերողներ և սարսափ զգալով բանվորական շարժման առաջ, դարավերջին դառնում են կրոնամոլներ կամ, ավելի շուտ՝ ցույց են տալիս, թե հավատում են։ Այդպես է, օրինակ, «Քաոսի» Գապաշան, որ աշխատում է դիրք պարգեել «սրբազան առաջնորդին»։ Շիրվանզադեի, ինչպես և Երվանդ Օտյանի երկերում, հայ բուրժուան իր կեղտոտ հաշիվները միշտ մաքրում է կղերի միջնորդությամբ։ Այսպես, օրինակ, Տեր Վահակը աջակցում է Մակար աղային «Գործակատարի հիշատակարանը» վիպակում։ Նույն Տեր Վահակը Ցորդա Խատուց նվեր է ստանում եկեղեցու համար մի նոր զանգ և թողություն տալիս նրա մեղքերին։ «Արսեն Դիմաքսյանի» մեջ խոսելով մի հարստի մասին, որ ուզում է եկեղեցական պատվամավոր ընտրվել, Շիրվանզադեն գրում է. «Երեկ լայնաթևը (=կղերականը) նրա մոտ ճաշի է եղել, նրանք գործում են ձեռք ձեռքի տված» («Երկեր», III, 125)։ Կղերը բուրժուազիայի հետ գաշնակից դառնալով, եկեղեցին նրա դասակարգային հիմնարկը կերպարանափոխելով, վարք ու բարքի մեջ ես աշխատում է բուրժուականանալ։ Նա իր անառակությամբ մրցում է ցոփ պլուտոկրատիայի հետ։ Նույնիսկ գավառական կղերը թողել է իր նահապետական շպարը և տուրք է տալիս աղ-

կոնոլիզմին։ «Զար ոգու» մեջ Մուրացը Սոնային հիշեցնում է հետևյալը. «Մոռացել ես... օրինակ, մեղ պսակող Տեր Սարգսի հարբած լինելը։ Միաղ չէ՞, ինչպես նա խորանից շուրջառը թարս գցած դուրս եկավ» (ծիծաղում է) («Երկեր», V, 336)։ Դեռ ութսունական թվականներին Շիրվանզադեն խոստովանել է, որ հայ և օտար կղերը ժողովրդի ծաղրի առարկան է. «Պարսիկ մոլլան, ռուս դիակոնը և հայ վարդապետը,— գրում է Շիրվանզադեն,— անեկդոտների մի առատ աղբյուր են ժողովրդի համար։ Ով կամենում է մեր հոգևորականների կյանքից անեկդոտների մի հարուստ ժողովածու կազմել, թող նա շրջի մեր վանքերը, նույնիսկ միաբաններից նա կլսի շատ անեկդոտներ, միայն մեծ մասամբ գրուբյան համար անհարմար բովանդակությամբ» (նույն տեղ, էջ 30)։ Նույն ութսունական թվականներին Շիրվանզադեն նկատել է, թե ինչպես են աշխատում իրենց անմահացնել կղերականները՝ նույնիսկ պատմական հիշատակարանները փչացնելով. «Այս տապանը,— ասաց վանքի տիրացուն,— չգիտեմ որ նշանավոր մարդունն է. քարի վրա եղել է նրա անունը։ Հանգուցյալ Սարգիս Զալալյանցը այստեղ (=Հաղպատում) վանահայր եղած ժամանակ, ջնջել է և իր անունը փորագրել։ այժմ վանահայր Վարդան Օձնեցին է ջնջել Սարգիս անունը և իր անունը փորագրել։ Դա սովորական բան է...» (նույն տեղ, էջ 37)։ Հակոբ Պարոնյանը գրել էր Դալֆայան եպիսկոպոսի մասին, որ նա երկնքի արքայությունը վաճառում էր իր հարուստ ննջեցյալներին համապատասխան գումարներով։ Այդ նույն «Բանի առուտուրը» նկատել է նաև Շիրվանզադեն. հարուստ մեռելներին գրվատում են եպիսկոպոսները՝ համապատասխան «աջահամբույրներ» ստանալով։ «Բեմ բարձրացավ եպիսկոպոսը,— գրում է Շիրվանզադեն,— և սկսեց փքուն խոսքերով գրվատել հանգուցյալի քանի մի բարեգործական նվերները, որ ոչինչ էին նրա հարստության համար» («Երկեր», VII, 19)։ Ինչպես Մուրացանը իր «Զնաս է» վիպակում, այնպես էլ Շիրվանզադեն իր «Քառս» վեպի մեջ ակնարկում է այն մասին, թե ինչպես կղերը ի չարն է գործադրում ապաշարդանի իրավունքը և առհասարակ «պսակի խորհուրդը»։ Անուշը ցանկանալով ամուսնուց բաժանվել. մոտածում է. «Նա կգնա թեմական առաջնորդի մոտ, կընկնի ոտները, կաղաչի, որ նրա համար էջմիածնից ապաշարդանի իրավունք բերել տա։ Եթե ձրի չի միջնամիլ, Անուշը կկաշառի նրան։ Այդ հոգևորականները փողով միշտ միացնում են անմիանալին և բաժանում անբաժանելին» (նույն տեղ, էջ 104)։

Այժմ հետաքրքրական է տեսնել Շիրվանզադեի հայացքների էվոլուցիան նրա մեմուարական երկերի մեջ։ Դեռ «Մշակի» և «Մեղվի» պայքարի ժամանակ նա այն տեսակետն է պաշտպանել, թե «եկեղեցու գերը ազգի պահպանության համար վերջացած է համարում» («Երկեր», VII, 180)։ Ինչպես վերև տեսանք, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Շիրվանզադեն իր այդ միտքը խմբագրեց հօգուտ կղերի։ Սակայն Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ նա կրեց իր մեմուարների շարունակությունը, կղերի երգը հայտարարեց միանգամայն երգված-վերջացած։ «Առհասարակ հայ եկեղեցին,— գրում է Շիրվանզադեն,— վաղուց է կորցրել է իր արժեքը, որպես ազգաբավայր, որպես հավատի սիմվոլ, որպես պաշտամունքի առարկա, որպես իմացական սրբություն» («Կյանքի բովիկ», 2-րդ մաս, էջ 61)։ Սակայն Շիրվանզադեի համար պարզ

էր, որ բուրժուազիան միշտ տրամադիր է գալվանիզացիայի ենթարկել զիակը իր շահերի համար։ «Հայ քահանան,—գրում է Շիրվանզադեն,—հայ վաճառականի կամակատար գործակալն է, հայ վաճառականը հայ քահանայի կթան կովն է։ Հոգևորականն տեսակետից նրանք Միամի զույգ են, միասին ծնվում են, և միասին էլ մեռնելու են» (նույն տեղ, էջ 148)։ Թե Շիրվանզադեի և թե նրա տիպերի հոգեբանության մեջ երբեմն ծագել են տարակույսներ քրիստոնեական վարդապետության շուրջը։ Այսպես, օրինակ, Շամախու երկրաշարժի ժամանակ նրա մեջ ծագել է հետևյալ տարակույսը. «Մարդկային մտքի ու բնության զարմանալի հակասություն, սոսկալի աղետը վերազրելով աստծուն, մարդիկ դարձյալ պաշտում էին նրան, և այնքան ջերմեռանդորեն, որքան դատ էին տառապում նրանից» («Երկեր», VIII, 77)։ Շիրվանզադեի տիպերի հոգում երբեմն առաջ են գալիս ֆրիկի հարցերը։ Այսպես, օրինակ, նրա պարզունակ հերոսուհիները—հացթուխը և իր դուստր Սոնան երկմտում են աստվածային արդարության մասին։ Երկյուղած և աստվածապաշտ հացթուխը սարսափում է, երբ աղջիկը նրան հարց է տալիս. «Մայրիկ, ինչու մեկն ստեղծվում է առողջ և բախտավոր, մյուսը—հիվանդ և թշվառ»։ Հենց հացթուխի հոգին էլ հանգիստ չէ. «Նա ձգտում էր իր թշվառության համար արդարացուցիչ պատճառներ գտնել։ Շատ խիստ էր ճակատագրի վճիռը, և չէր ուզում հաշտվել այն մտքի հետ, թե այդ վճիռը կայացնողը կարող է, առանց մի մեծ պատճառի, լինել այդքան անիրավ, այդքան անողոք։ «Աստված արդար է և ողորմած», հնչում էին նրա ականջին այս խոսքերը, որ ամեն օր լսում էր եկեղեցում։ Մթթե քահանան կարող է սուտ ասել, մթթե եկեղեցին կարող է խաբել» («Երկեր», I, 204 և 214)։

Շիրվանզադեն օպոզիցիոն վերաբերմունք է ցույց տվել նաև կղերի հովանավորության հանձնված դպրոցական կազմակերպությանը։ Դեռ իբրև մանուկ, նա ևս, ինչպես և Ռաֆֆին, իր կաշվի վրա զգացել է խալֆայական դպրոցի բռնության հարվածները։ «Ինքնակենսագրության» մեջ, որ նա գրել է «Լույս» անունով սեղանի օրացույցի համար, 1906 թվին, Շիրվանզադեն ասում է. «... Ինձ հանձնել է Շամախու Թեմական դպրոցը։ Մոռացել եմ, թե ինչ դպրոց էր այդ, գիտեմ, որ ամեն մի խանութպան, որ ոսկե գոտի ուներ, այնտեղ հոդաբարձվի և բարձրագույն հսկիչի դեր էր կատարում»։ Թեմական դպրոցից զուրս գալով, մանուկ Շիրվանզադեն մտել է Ղարաբաղցի Տեր Հովհաննեսի դպրոցը։ «Այս երջանկահիշատակ հոգևորականի մոտ,—գրում է նա,—ես, զորս դու պատվիրեցեր, ծանոթացել եմ հոչակավոր ֆալախկայի կրթական զորության հետ, և գարշապարներիս վրա զգացել եմ գիտության և ուսման բարերար ներգործությունը։ Երեի, այդ ներգործությունը շատ խորն է եղել, որ շուտով ինձ, քանի դեռ կենդանի եմ, խլել են ավազակաբարո հոգևոր հոր ճանկերից և հանձնել տեղական գավառական դպրոցը»։ Այնուհետև Շիրվանզադեն իր հետագա գեղարվեստական երկերի մեջ, հատուկ մանկավարժական տենդենցով, միշտ հակադրվել է հոգևոր վարչության դպրոցական սիստեմին։ Ինչումն էր գտնում նա այդ սիստեմի հիմնական թերությունը։ Եզվիտական դաստիարակության ամենամեծ պակասությունը հելվալդը համարում է այն, որ իր դաստիարակության հանձնված սերնդին պահում էր մշտական ադայության մեջ (տես Hellwald, „Kulturgeschichte", IV, S. 210—211)։

Ամստերդամում առաջին հայ տպագրական երկերից մեկի վերնագիրն էր. «Վասն դեռակիրթ և խակավարժ մերազնեա մանկանց»։ Դա առաջին հայ հանրագիտարանն էր, որ իր ընթերցողների մասին այդքան վարնոց հայացք ուներ։ Կղերի մասին ընդհանուր առումով բացասական կարծիք ունենալով, Շիրվանզադեն նրա դեկավարած դպրոցն ևս քամահրանքով է դիտում, որովհետև հետևում է Ուշինսկու այն իմաստուն խոսքին, թե՝ «ուսուցչի անձնական ազդեցությունը մատաղ հոգու վրա ներկայացնում է այն դաստիարակչական ուժը, որ չի կարելի փոխարինել ոչ դասագրքերով, ոչ էլ բարոյական խրատներով»։ Ուսուցչի անձնական ազդեցություն ասելով, Ուշինսկին հասկացել է նրա բարոյական դեմքը, այն՝ որ Նրան հավասարեցնում է սանի հորը, նույնիսկ ավելի էր գերադասում։ Շիրվանզադեի տիպերից շատերը զգվանքով են հիշում իրենց ուսումնառության շրջանը, այսպես, օրինակ, գործակատար Խաչին. «չորս տարի շարունակ Տեր Վահագի ձեռքում տանջվելուց հետո,—ասում է նա,—չորս տարի նրա բարբարոսական ֆալախկայի տակ չարչարվելուց հետո, բնական է, որ ինձ անսահման բախտավոր պիտի համարեի, երբ վերջապես ազատվել էի անխիղճ տերտերի զարհուրելի ձեռքից» («Երկեր», I, 20)։ Չնայած կղերի նյութական բարեկեցության՝ նրա դեկավարած եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցչական կազմի նյութական դրությունը խղճալի էր։ Շիրվանզադեի հերոսներից մեկը՝ Սարաֆյանը իր ուսուցչական անցյալի մասին պատմում է հետևյալը. «Այն ժամանակ ես նոր էի սկսել ուսուցչություն անել։ Դուք գիտեք հայ վարժապետի դրությունը. ոռճիկս այնքան քիչ էր, որ հազիվ կարողանում էի չոր գլուխս պահել։ Այդ պատճառով ես ապրում էի ամենաազքատ սենյակներում, ճաշում էի ամենաէժան պանդոկներում» («Երկեր», II, 113)։ Շիրվանզադեն իր «Արսեն Դիմաքսյան» վերնագրով վեպի մեջ տվել է հոգևոր միջնակարգ դպրոցի պատկերը։ Նախ՝ աշակերտներն իրավազուրկ էին և ենթակա ուսուցիչների և նույնիսկ տեսչի կոպիտ հայհոյանքներին։ Նրանք վախենում էին թե մեկից և թե մյուսներից։ Նրանց բարոյական աշխարհը ենթակա է բռնության, որովհետև դեկավարներն աշխատում են «կրոնական դաստիարակության» միջոցով նրանց դարձնել կամազուրկներ։ Երկրորդ՝ ուսուցիչների կախումը հոգևոր վարչությունից, հացի խնդիրը նրանցից շատերին դարձնում էր «սուտ ճրգնավորներ»։ Աշակերտների մեջ հդացած հլությունը,—գրում է Շիրվանզադեն,—նրանք (=ուսուցիչները) համարում էին հավեստություն, երկյուղը՝ հեզություն։ Դա էր նրանց աչքում բարոյական դիսցիպլինան» («Երկեր», III, 113)։ Եզվիտ տեսչի հետ միասին փայլում էր իր ստորությամբ «գերմանական մանկավարժ» Ինյաթյանը, որ հետագում հոգաբարձուների խոսափողն էր դարձել՝ տեսչի պաշտոն ձեռք բերելու նպատակով։

Այժմ հետաքրքրական է իմանալ մի բան։ Իբրև խոշոր գրող՝ արդյոք Շիրվանզադեն իր ստեղծագործության մեջ ցույց է տվել ժողովրդի դրժզոհությունը տիրող կարգերի դեմ։ Անշուշտ։ Նա չէր կարող չնկատել հասարակական-քաղաքական կյանքի շրջադարձը։ 1901—1904 թվերին ողջ Ռուսաստանն ապրում է նախահեղափոխական տագնապ։ Դրվում է բուրժուական-դեմոկրատական ռևոլուցիայի նշանաբանը—ինքնակալության և կալվածատիրության վերացումը։ Մայր են առնում ագրարային ըմբոստացումները, առանձնապես Հարավային Ռուսաստանում։ Սկսվում է ռևոլուցիան, և

գյուղացու դագանակը իջնում է կալվածատիրոջ գլխին։ Շիրվանզադեն խոստովանում է, որ ինքը հանդիպել է այնպիսի ազնվականների, որոնք գանգատվում են գյուղացիական ընդվզումների դեմ։ Մի կալվածատիրուհի ասում է. «Եղբայրս գրում է, որ գյուղացիները էլի ըմբոստացել են և չեն ուզում իրենց կապալավարձը վճարել» («Կյանքի բովից», 2-րդ մաս, էջ 139)։ Շիրվանզադեն իր «Ջհուդի ականջը» պատմվածքի մեջ բնութագրել է 1905 թ. ռևոլուցիայի էպոխան։ Նախառևոլուցիոն շրջանում նա զգացել է մոտալուտ փոթորկի վերահասը. «Մոայլ դեմքերի և կորացած մեջքերի վրա նշմարվում էր քաղաքական հեղուցիչ մթնոլորտի ճնշումը»։ Իսկ երբ ռևոլուցիան սկսվում է, «ազգերը և դասակարգերը» ցունց են լինում. «Փողոցներում ստեպ-ստեպ իջնում է կարմիր գրոշը։ Նրա դույնը խիստ գրգռում է ոմանց, ինչպես որսորդի աչքերը օրհասական արջին» («Երկեր», I, 277)։ Օրհասական արջը Անդրկովկասում ստեղծում է հայ-թուրքական կոտորածը, իսկ կենտրոնական Ռուսաստանում՝ հրեական ջարդը։ Բայց այդ բոլորը չի կասեցնում հարվածը նրա գլխից. ոչ միայն միապետությունը, այլև նրա հովանու տակ գտնվող բուրժուազիան սարսափահար է լինում։ Այս վերջինի հոգեվիճակը Շիրվանզադեն նկարագրում է իր «Շառլատանը» վերնագրով։ Ոգևիլի մեջ, ուր հենց առաջին տեսարանից պարզվում է տերերի գժգոհությունը ծառաներից, բանվորներից. «այժմ ծառայողները օրական 8 ժամից ավելի պարապել չեն ուզում։ Ս օ, շատ են երես առել, գործի տերը այժմ տերը չէ, այլ ծառան, բանվորը» («Երկեր», V, 265)։

Շիրվանզադեի ստեղծագործության մեջ ինտերնացիոնալիզմի գաղափարը այն բարձունքն է, որի վրայից նա ճշտորեն և պարզ կերպով նկատել է հասարակական տեղաշարժի ե՛ հնարավորությունը, ե՛ առկայությունը։ Բաքվից Թրիլիսի գալով, Շիրվանզադեն ընկնում է մի միջազգային շրջան, ուր իրեն նա շատ լավ է զգում։ «Ինձ համար,—գրում է Շիրվանզադեն,—այդ շրջանը հավակրելի էր միջազգային բնույթով, բարոյական աշխարհայեցողության և հոգեկան պահանջներով։ Այդտեղ պարզությունը և անկեղծությունը յուրաքանչյուրի համար պարտավորական էին» («Երկեր», VIII, 193)։ Այդ շրջանում Շիրվանզադեն ծանոթանում է ռուս ռևոլուցիոն դեմոկրատ գրողների հետ, ծանոթանում է սոցիալիզմի ուսմունքին և, իր ասելով, կարդում է Մարքսի «Կապիտալը»։ Հենց նույն այդ ժամանակ նա ծանոթանում է նաև հայ ռևոլուցիոն դեմոկրատ Միք. Նալբանդյանի հետ և նպաստում, որ «Երկրագործությունը» վերահրատարակվի անլեզալ ձևով։ Նրա այդ սկզբնական գրական ուսումնասիրությունը վճռական նշանակություն է ունենում հետագա երկասիրության համար։ Շիրվանզադեն ոչ միայն համակրանք է ցուցնում աշխատավոր խավերին, այլև մեծ սիրով է խոսում ազգային փոքրամասնությունների մասին. օրինակ՝ դաղստանցիները, հրեաները և մյուս ճնշված ազգությունները վայելում են նրա համակրանքը։ Հրեաների անհայրենիք, աստանդական կյանքը որա սրտովը չէր։ Շիրվանզադեն գրում է. «Զէ՞ որ այդ անբախտ ժողովրդի ճակատին պատմությունը գրել է՝ թափառիր հավիտյան» («Երկեր», I, 275)։ Բայց, հարկավ, Շիրվանզադեի ուշադրության կենտրոնում էր գաղնվում աշխատավորության վիճակը, այն ակնբախ հակադրությունը, որ նա գծագրել է այսպես, խոսելով նավթային խողովակների մասին. «Դա նավ-

թային արդյունաբերության գարկերակներն էին—բյուրավոր մարդկային էակների դժոխային աշխատանքի և միայն մի քանի տասնյակ բախտավորների հարստության չափը» («Երկեր», VII, 110)։ Իր նշանավոր եռյակի— Զուպրովի, Կարապետի և Ռասուլի—մտերմությունը, ընկերությունը, սերտ կապը նկելով՝ Շիրվանզադեն իր ինտերնացիոնալիզմի լավագույն փաստն է ընդգծել «Ճարրեր կրոնների, տարբեր լեզուների, տարբեր ցեղերի պատկանող այս երեք բանվորների մեջ կար մի ամենքն հայտնի մտերմությունը։ Նրանք հոչակված էին իրենց անվախությամբ, վայելում էին բոլոր մշակների հարգանքը և նախանձը։ Ուրծի էին գնում միասին, վերադառնում էին միաժամանակ, բնակվում էին միևնույն սենյակում, գիշերում միևնույն թախտի վրա» (Նույն տեղ, էջ 257)։ Այդ երեքի հումանիզմը փայլում է, մարդակերների «բազաքակրթության» ցիտադելի մեջ. հրդեհի մոմենտին նրանք վազում են գետի վտանգը՝ առանց խտրություն դնելու ազգային պատկանելության մեջ։ Առանձնապես վեհորեն է գծել Շիրվանզադեն ռուս բանվորի կերպարը. Զուպրովը շտապեց ներս։ «Այլևս նա գիտեր, որ այնտեղ կան մարդկային արարածներ, որոնց պետք է փրկել։ Ո՞վքեր են այդ մարդիկ. միևնույնն է նրա համար, պետք է ազատել. արհամարհել ամեն վտանգ և ազատել, այս է հեռավոր հյուսիսից եկած բանվորի պարզ սկզբունքը» (Նույն տեղ, էջ 306)։

Առհասարակ Շիրվանզադեի ստեղծագործությունը փայլում է հետևողական ռուսասիրությամբ։ Նա ռուս ժողովրդի հավողված բարեկամն է։ Նա շատ բարեռար է հավարում ռուսական ազդեցությունը հայ կուլտուրայի, դրականության և թատրոնի վրա։ Պոլսահայ նշանավոր արտիստներին - Ագամյան, Հրաչյա, Սիրանուշ—համարում է ռուս թատրոնի սաներ, որոնք «կրթվել ու զարգացել են ռուս թատրոնի և ռուսահայ շրջանների ազդեցությամբ» («Երկեր», VIII, 233)։ Շիրվանզադեն հաճույքով է պատմում, թե իր դրամատուրգիական գործունեությունն արժանացել է ռուս մամուլի գովասանքին, որ նրան հետագայում լիցք է տվել իր գործը շարունակելու և չենթարկվելու Լեոների քամահրանքին։ Առանձնապես մեծ է Շիրվանզադեի հիացմունքը ռուս գեղարվեստական դրականության հանդեպ. Նրա համար անմատչելի գագաթներ են Տոլստոյը և Դոստոևսկին։ Շիրվանզադեն խոստովանում է, թե իր մտքով անցել է մի լուրջ դրական-գեղարվեստական ամսագիր հրատարակել Վահան Տերյանի և Սիմանթոյի աշխատակցությամբ Ն վճռել է դա լույս ընծայել Մոսկվայում, ապահովելով նաև մի շարք ռուս գրողների մասնակցությունը («Կյանքի բովից», 2-րդ մաս, 89)։ Իր շատ երկերում Շիրվանզադեն մեծարանքով է խոսում նաև ռուս տիրապետության ժամանակ առաջ եկած դպրոցական կուլտուրայի մասին։ «Դիանա ինչ,—ասում է Շիրվանզադեի հերոսներից մեկը,—այն օրից, որ ռուսը ոտը դրեց մեր կողմերը, ամեն ինչ փոխվեց։ Հին կարգերը տակն ու վրա եղան. Նոր կարգեր առաջ եկան։ Հիմա ուսում է հարկավոր...» («Երկեր», I, 84)։ Իր փոքրիկ հերոսներից մեկի քաջությունը գովելու համար Շիրվանզադեն նրան անվանում է «Փոքրիկ Սուվորով» (Նույն տեղ, էջ 109)։

Շիրվանզադեն նշելով և գովելով ռուս ժողովրդի մեծահոգությունը, հումանիզմը, միևնույն ժամանակ խարանել է եվրոպական իմպերիալիստների թալանչիական գործունեությունն Արևելքում։ Իր համիրդությունը

դեպի Եգիպտոս՝ տխուր խոհերի առիթ է ավել։ Արաբական ժողովրդի տնտեսական և քաղաքական ճնշված վիճակը նկատելով՝ Շիրվանզադեն միևնույն ժամանակ զգացել է, որ նրա մեջ յասում է առաջ գալիս եվրոպական իմպերիալիզմի դեմ։ Շիրվանզադեն հետևյալ մարգարեական միտքն է հայտնել. «Պարզ է, որ մի օր ամբողջ արաբ ցեղը պիտի կատաղե բռնակալների դեմ և տապալի նրանց» («Երկեր», VII, 397)։

Շիրվանզադեի քննադատներից ոմանք, մանավանդ նրա գրական գործունեության սկզբնական շրջանում, տրամադիր էին նրան դիտելու իբրև մի ապոլիտիկ գրող, որ զուրկ է ցայտուն հայրենասիրական աշխարհայացքից։ Մինչդեռ այսօր, երբ դիտում ենք Շիրվանզադեի ողջ ստեղծագործությունն իր սկզբով, ընթացքով և վախճանով, մեզ համար պարզվում է, որ նրա ինտերնացիոնալիզմի հիմքում ընկած է հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանությունը. մի կոնկրետ օրինակ, թե ինչպես կարելի է կենսագործել առհասարակ որևէ քաղաքական-աղատագրական պրոբլեմ, տվյալ դեպքում հռչակավոր «հայոց հարցը»։ Շիրվանզադեն սկսում է հեռվից, հայ պատմական անցյալից։ Դեռ ուրբաթնական թվականներին գրած մի համբորդական նկարագրության մեջ նա զարմանում է մեր նախահայրերի տոկունության վրա, որ նրանք կարողացել են իրենց անկախ կուլտուրան պաշտպանել անհնարին ծանր պատմական պայմաններում։ Ստիպված լինելով շարունակ դեպի լեռները ապաստանել և հովիտներն ու դաշտերը թողնել նվաճողներին, հայերը նույնիսկ լոռու այրերը դարձրել են անառիկ բերդեր։ «Այրեր,—բացականչում է Շիրվանզադեն,—ահա որտեղ են հայի նախահայրերը ապաստան գտել թշնամու հալածանքից, ահա որտեղ են նրանք մոնղոլների, լեղդիների, պարսիկների անողոք սրից ազատել իրենց կանանց ու զավակներին։ Բիրտ ու կոպիտ ժայռի սիրտը ավելի կակուղ է եղել, քան թե մարդինը՝ մարդի համար։ Եթե վկա չլինեն մարդկային ձեռքի անջնջելի հետքերը, անհավատալի պիտի թվար նույնիսկ պատմության խոսքը. թե երբևիցե այս խորշերն ու այրերը բնակատեղիներ են եղել,—այնքան նրանք բարձր են՝ երկրից և այնքան ցած՝ ժայռերի գագաթից» («Երկեր», V, 6)։ Նախնի հայերը ինչպես որ իրենց կյանքը փրկել են անմատչելի բնության ծոցում, այդպես էլ իրենց կուլտուրական արժեքները դարձյալ վստահել են հայ լեռնաստանին։ Շիրվանզադեն ոգևորությամբ պատմում է, որ նույնիսկ սարսափելի աշխարհակալ Լենկ-Թեմուրը ստիպված է եղել իր հորդաները դուրս հանել Հաղպատի ստորոտներից՝ հանդիպելով հայերի դիմադրությանը, որոնք «գրավելով ձորի նեղ կիրճերը, դեմ են տվել իրենց կուրծքը թշնամուն ե, ջարդելով աշխարհավեր Հաշմի զորքերը, ետ են դարձրել նրանց»։ Ոչ միայն քաջերի հայրենասիրությունը, այլև տաղանդավոր հայերի ստեղծագործությունը թե ճարտարապետության և թե գրականության մեջ, Շիրվանզադեին խանդավառում են ազգային հպարտությամբ և նա հիացմունքով պատմում է Հովհաննես Սարկավագի մասին հետևյալը. «Մեր մատենագրության արծաթյա դարի փայլուն աստղերից մեկը, Հովհաննես Վարդապետ «Սարկավագ» կոչվածը, այստեղ է մի ժամանակ շարադրել իր երկասիրությունը և այստեղ է նա հայ մանուկների սրտում զարգացրել հայրենասիրական զգացմունքները...» (նույն աեղ. էջ 14)։ «Ապոլիտիկ» կոչված Շիրվանզադեն ոչ միայն վեր է հանում հայ պատմության հերոսական էջերը. հայ

ժողովրդի ստեղծագործական ջանքերը, այլև նրա ազգային հպարտությունը վիրավորվում է ամեն անգամ, երբ տեսնում է, որ այս կամ այն հայը իր կոչման բարձրության վրա չի գտնվում, այսինքն չի հավասարվում և նույնիսկ անցնում իր նախորդներից մեծագործությամբ։ Շիրվանզադեն պատմում է հետևյալ տխուր դեպքը. «Դեռ անցյալ դարի վերջն էր, երբ լեզգիները աջ ու ձախ կոտորելով, հասնում են այս փոքրիկ գյուղը (=Ճվճվան) և սկսում են սրի քաշել նրա քրիստոնյա բնակիչներին. դերի տարվող կանայք և երեխաները սկսում են գոռալ, ճչալ, ճվճվալ. և այդ օրից գյուղը ստանում է «Ճվճվան» անունը։ Երբ առաջին անգամ լսեցի այս անունը, երբ իմացա նրա ծագման տխուր պատմառը, ցավակցություն չէր այն, որ զգացի, այլ, խոստովանում եմ, մի տեսակ վիրավորանք։ Ի՞նչ ողորմելի աղգ ենք եղել, որ անցյալը մեզ համար այդպիսի ամոթալի անուններ է թողել» (նույն տեղ, էջ 18)։ Շիրվանզադեն քարոզում է թշնամու նկատմամբ անողոքություն, նա ևս դավանում է Բալզակի մի պատգամը—թշնամուն պիտի ժոտենալ՝ միայն նրա վիզը կտրելու համար։ Պատմելով. թե Լոռու ձորում մեր նախնիք յոթ թշնամուց մեկին աղատել են, վեցին սպանել. Շիրվանզադեն գայրանում է. «Մեր պատմության էջերում այդպիսի անխոհեմ վեհանձնության օրինակներ շատ կին պատահում, և ինչքան ցնաներ է տվել ազգին այդ վեհանձնությունը, երբ մանավանդ վեհանձնաբար վարվել են ահռելի թշնամիների հետ» (նույն աեղ, էջ 23)։

Նույն պատմության հերոսական էջերը դրվատելով, Շիրվանզադեն ուրբանական թվականներին հիմնականում կռվում էր ռեակցիայի դեմ, սրա հակազգային քաղաքականության դեմ, ուժեղացնում էր հայ գրականության դեմոկրատական թեը և մեկնաբանում իր այնպիսի դրական տիպերի գործունեությունը, ինչպես են Ռուբենը, Մարդանյանը, Բագրատյանը և այլն։ Շիրվանզադեի երգիծանքի մասին կխոսվի առանձին, բայց հենց հիմիկվանից ասենք, որ նա հեգնում է այն հայերին, որոնք հայ պատմական անուններ են կրում և նրանց անվան անպատվաբեր գործեր կատարում։ Ի՞նչ հակասություն. Վարգան... Ահրումյան. հինգերորդ դարի հերոսի անունը մի անարդ կուտակողի վրա։ Պատմելով Վարդան Ահրումյանի մկրտության հանդեսի մասին, Շիրվանզադեն գրում է. «Տեր Համբարձումը մանկանը տվեց Վարդան անունը, խորապես համոզված, որ ավելի հարմար և պատվավոր անուն չէր կարող գտնել Աբրահամ աղայի սանիկի և ամեն բանից դժգոհ Բազդասարի գավակի համար։ Թող սուրբ զորավարի խաչը և սուրը պաշտպանեն նրան» («Երկեր», I, 83)։ Եթե անարգ կուտակողի վրա Վարգան անունը—նույն է թե կովի վրա թամբ դնել - ծիծաղելի է, Արսեն Դիմաքսյանը հպարտությամբ է կրում իր պատմական ազգանունը և ներքուստ համոզված է, որ ինքը հայ պատմության հերոսական էջերի ժառանգորդն է։ Շիրվանզադեն այսպես է բացատրում կուլտուրական ժառանգության պրոբլեմը. «Վերակենդանացան Դիմաքսյանի աչքի առջև այն բոլոր մարտիրոսները, որոնց տվայտանքով պահպանվել էր այդ կյանքը և հասել ներկա օրերին։ Պատկերացավ մի տառապող ժողովրդի ներկան, որ ունեցել էր անցյալ, և այդ անցյալը ապագային կտակելու համար իր միջից տվել էր անձնազոհ նահատակների մի անվերջ շարք։ Աղգի հետ մի հոգի, մի արյուն զարձած, նրանք տարիներ շարունակ մաքա-

ուեցին քրիստոնեական լուսավոր գաղափարների համար... Անմահ նահատակներ, ներշնչեցեք ինձ ձեր հավատերության և տոկունության հոգին, տվեք ինձ մի չնչին մաս ձեր ուժից։ Ժամանակներն անցան, ձեր պաշտպանած ազգի պահանջներն այժմ փոխվել են, բայց ձեր նման անվեհեր զինվորների կարիքը կա և կմնա, քանի որ գոյություն ունի այս թշվառ ժողովուրդը» *(«Երկեր», III, 226—227)։ Անվեհեր զինվորների շարքում Շիրվանզադեն ներգրավում է նաև կանանց և, Բաֆֆուց հետո, կոչ է անում հայ կնոջը դուրս գալ նեղ անձնական, ընտանեկան կյանքի խեղդուկ մթնոլորտից, լայն հանրային հորիզոններ ընդգրկել, որդեգրվել անձնուրացության գաղափարին և առաջավոր տղամարդու լծակիցը դառնալ քաղաքական փշոտ ասպարեզում։ Բագրատյանն ասում է Մարիամին. «... Կնոջ դերը չպիտի սահմանափակվի միայն հասարակ տնտեսուհու և քնքույշ մոր պաշտոնով։ Ինչպես մեր երիտասարդության, նույնպես և օրիորդների բոլոր ուժերը ներկա ժամանակ պետք է ուղղված լինեն դեպի մի կետ, պետք է ծառայեն ժողովրդի հասարակական վինակի վերակենդանության գործին։ Ահա այս դերը կատարողից պահանջվում է անսասան սեր դեպի իր Հայրենիքը և այդ սիրո անունով անձնազոհ լինելու պատրաստականություն» («Երկեր», IV, 344)։*

Իբրև առաջավոր ռեալիստ գրող, Շիրվանզադեն չէր կարող անտես անել թուրքահայերի ծանր քաղաքական դրությունը։ «Հայոց հարցը» նա միշտ համարել է հայ ժողովրդի քաղաքական ինքնապահովության, ինքնուրույնության, անկախության խնդիր, որ հիմնականում դերծ է որևէ ազդեսիվ մտահայեցողությունից և գործելակերպից։ Եթե նա իր «Պատերազմի վայրերից» ուղեգրական հոդվածի մեջ Մասիս սարը կոչում է «Բաժանբաժան եղած ազգի ապաբախտ սիմվոլ», եթե նա ցանկանում է հայ ժողովրդի քաղաքական համախմբումը, ռուս ժողովրդի, ռուս դեմոկրատիայի աջակցությամբ պետական ինքնուրույնության նվաճումը, ապա նա գիտակ է նաև այն բանին, որ դա դեմընթաց է ոչ միայն տաճիկ բռնությանը, ապա նաև եվրոպական իմպերիալիզմի տխրահռչակ արևելյան քաղաքականությանը։ Դեպի Եգիպտոս ճամբորդելու ժամանակ, ճանապարհին Շիրվանզադեն անցնում է Կիպրոս կղզու մոտով և հետևյալ տխուր մտքերն են պաշարում նրան. «... գիտեմ, որ այդ կղզին հայի արնագին է անգլիացիներին տրված։ Անցյալ դարի ռուս-թուրքական պատերազմից հետո Անդլիան Բեռլինի վեհաժողովում Թուրքիային Ռուսաստանի պահանջների դեմ պաշտպանելով, ծովը նետեց հայկական կոչված դատը և իբրև վարձ ստացավ Կիպրոսը ջլատվող Թուրքիայից...» («Երկեր», VIII, 381)։ Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ հիշված պատերազմի ժամանակ, երբ ողջ հայ առաջավոր ինտելիգենցիան հնին քաղաքականությամբ էր տարվել և իրար հետ կռվում էին տարբեր օրիենտացիաների ներկայացուցիչները, Շիրվանզադեն ռուսասիրական օրիենտացիայի կողմնակից է եղել։ Այդ մասին նա գրում է հետևյալ ուշագրավ տողերը. «որոշ խնդիրներում ես համամիտ էի Արծրունու գաղափարներին և ուժերիս չափ ձայնակցում էի նրան «Աբձագանքի» էջերում, հակառակ Աբդար Հովհաննիսյանի ընդդիմադրության։ Այդ խնդիրներից էր և թուրքահայերի քաղաքական կացությունը... այդ այն ժամանակներն էին, երբ թուրքահայերի վիճակը հուզել էր երիտասարդությանը նոր ուժով ութսունական թվականի վերջե-

րին և իննսնականների առաջին տարիները։ Երիտասարդության հայրենասիրական զգացումները փոթորկվել էին և ելք էին որոնում» (նույն տեղ, էջ 208)։ Այդպիսի մի բարձր քաղաքական-հայրենասիրական ոգևորություն ու խանդավառություն Շիրվանզադեն ապրել է երկրորդ անգամ, երբ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մի պահ թվում էր, թե պիտի լուծվի «Փորձյան հանգույցը» և հայ ժողովուրդը, արևմտահայ զանգվածը պիտի տիրանա իր քաղաքական անկապտելի իրավունքներին։ Այդ ոգևորության ե, դրան զուգընթաց, սպասումների ամիսներին Շիրվանզադեն դրեց իր «Արհավիրքի օրերին» դրաման, ուր հին սերունդը հետևյալ քաղաքական կտակն էր անում. «Մեր կյանքը անցավ ստրկության և անարգանքների մեջ. երանի դուք, նորերդ, ավելի բախտավոր լինեք» (տես «Գործ» ամսագիր, 1917 թ. №№ 5—6, էջ 15)։ Շիրվանզադեն իբրև հայրենասեր մարդու տիպ, մի նշանավոր հատկություն ունի. նա չի սիրում, երբ ուրիշները խոսքով կարեկցում են հայերին, նրա ազգային հպարտության զգացմունքը շատ ինքնասեր է և ինքնագիտակ։ Շատերը հայ գրողներից պարծեցել են ֆրանսիական և շվեյցարական մեշչանների հայասիրությամբ. այսպես չէ Շիրվանզադեն։ Այդ առիթով նա գրում է հետևյալը. «Դուք շատ դժբախտ ազգ եք, ձեզ շարունակ հալածում են ու կոտորում Թուրքիայում,—ասում է Շիրվանզադեին լիոնցի մի ջութակագործ,—ես լռեցի։ Ինձ համար,—խոստովանում է հայ գրողը,—առհասարակ այդ ուղղությամբ օտարների հետ խոսելը վերին աստիճանի անախորժ, նույնիսկ վիրավորական էր։ Թվում էր ինձ, որ ես նրանց (=ջութակագործ հոր և նկարչուհի աղջկա) առաջ նսեմանում եմ, ոչնչանում։ Իմ ազգի խեղճությունը ես ինձ էի համարում և կարեկցության դեմ ավելի էի վրդովվում, քան ատելության և վիրավորանքի դեմ» («Կյանքի բովից», 2-րդ մաս, էջ 177)։ «Ազգի խեղճություն» ասելով՝ Շիրվանզադեն հասկանում էր նախ՝ հայ ժողովրդի քաղաքական անապահովության խնդիրը, ապա՝ նրա պետական անկախության բացակայությունը։ Այդ բանը երևում է նաև բոլոր այն դեպքերում, երբ նա խոսում է առհասարակ հայ կուլտուրայի մասին. ոչ միայն հիշատակում է անցած սերունդների կուլտուրական շինարարությունը, այլև հայ կուլտուրայի զարգացման հեռանկարները։ Այս վերջին բաժնում Շիրվանզադեն մի տերմին է գործածում՝ հայ անպաշտպան կուլտուրա. հենց դրանով նա շեշտում է այդ կուլտուրայի «ազգային պաշտպանության» խնդիրը, ինչպես կասեր Հովհ. Թումանյանը։ Խոսելով Թիֆլիսում հրատարակվող «Արշալույս» լրագրի մասին, Շիրվանզադեն գրում է. «Այդ լրագրի տերն ու տնօրենը Գ. Մ. Գ.-յան անունով մի կոկված ու շպարված երիտասարդ էր։ Կյանքի մյուս ասպարեզներում անհաջողությունների հանդիպած մի փոքրիկ բուրժուա էր, եկել փաթաթվել էր հայ գրականության անպաշտպան պարանոցին և «հրապարակախոսության» մեջ էր ճգնում փնտռել իր բախտը» («Կյանքի բովից», 2-րդ մաս, 18)։ Ժողովուրդն ասում է՝ մարդ չեղավ, տերտեր դարձավ. Շիրվանզադեն դրում է՝ «մարդ չեղավ, հայ գրող դարձավ»։ Շիրվանզադեն, ինչպես և Երվանդ Օտյանը, հայ մամուլի ինքնակոչ գրողներին շատ են ծաղրել իրենց վեպերի մեջ։ Շիրվանզադեի համար, սակայն, հայ անպաշտպան կուլտուրա տերմինը մի այլ նշանակություն ևս ունի։ Դրա հետևանքով ոչ միայն անշնորհքներն են շահագործում, այլև շատ տաղանդավոր մարդիկ կորչում են՝ դուրկ լինելով

նյութական ապահովությունից և իրենց աշխատանքը խրախուսող հնարավորություններից։ Շիրվանզադեն խոսում է այսպիսի մի տաղանդի մասին. դա Արովյանի արձանի հեղինակ-քանդակագործ Տեր Մարությանն էր, որ «այնպես վաղաժամ մահացավ թոքախտից կամ, ճիշտն ասած, անոթությունից» (նույն տեղ, էջ 21)։ Իր վրա առնելով հայ կուլտուրայի անկոչ հովանավորի դերը, բուրժուազիան իր խանութների պրակտիկան էր մուծում այդ ասպարեզում ևս։ Շիրվանզադեն մի պերճախոս փաստ է բերում. «Տեղն է ասել,—գրում է նա,—որ այն ժամանակ հայ թատրոնի ճակատագիրը գտնվում էր Բաքվի մի խումբ բուրժուաների ձեռքում։ Այդ խումբը խնդրել էր ինձ, որ հետևեմ Փարիզի ռեպերտուարին և, եթե մեր բեմին հարմար պիես տեսնեմ, թարգմանեմ կամ ուղարկեմ թարգմանելու։ Ես իմ մի նամակում ակնարկեցի, թե դրա համար դրամ է պետք։ Պատասխանս եղավ լռություն» (նույն տեղ, էջ 15)։ Մեծուարների մեջ տեղ գտած այդ դժգոհությունը լիուլի արտահայտություն է գտել Շիրվանզադեի վիպագրական և դրամատիկական գործունեության մեջ, ուր նա բարձր ձայնով խոսել է հայ կուլտուրայի ճգնաժամի մասին և փրկության միջոցներ առաջարկել։ Շիրվանզադեն իր Արսեն Դիմաքսյանին համարում է Արովյանի, Նալբանդյանի և Նաղարյանի գործի շարունակող, իսկ այդ երեքին համարում էր առաջին գինվորներ ժողովրդի առաջադիմության համար։ Դիմաքսյանի գործունեությանն անմիջապես նախորդող էպոխայի մասին Շիրվանզադեն գրում է. «Հասարակական կյանք չկա։ Մարդիկ մտածում են միմիայն իրենց նյութականի մասին։ Ժողովուրդը խարխափում է տգիտության մեջ։ Հին սերունդը բոնակալ է, նորը՝ թույլ, հալածված։ Վաճառական դասը ապականված է, հարստահարող, փողամոլ,... հայրենիքի խընդիր չկա, իդեալ չկա...» («Երկեր», III, 12)։ Ի՞նչպես այդ խնդիրը առաջադրել, ի՞նչպես այդ իդեալը կենսագործել։ Շիրվանզադեն իր «Արսեն Դիմաքսյանը» գրելու ժամանակ, այսինքն ինքնուսնական թվականների սկզբում, դավանում էր խոշոր անհատների կուլտը. անհատներ, որոնք պետք է ճանապարհ բաց անեն ժողովրդական ինքնագործունեության առաջ. «Հասարակությունը,—գրում է Շիրվանզադեն,—կարող է մի որևէ վերանորոգության համար պատրաստի հող չունենալ։ Անհատները կարող են այդ վերանորոգությունը իրենց ուսերի վրա պահել, մինչև որ նրանք ամուր պատվանդան կպատրաստեն» (նույն տեղ, էջ 119)։ Շիրվանզադեն պերճախոս տողերով նկարագրել է «Սերունդների պայքարը» մեղանում, բողոքել է «Մեռելները հրամայում են» ժաքսիմի դեմ և ցույց տվել, թե կոիվը ինչ կատաղության է հասել. «Մարդիկ ավելի աններողամիտ էին,—գրում է նա,—ավելի կրքոտ և ավելի հիշաչար։ Շատ անգամ վեճերը հասնում էին սարսափելի ծայրահեղության։ Հակառակորդները պատրաստ էին մտքի պատերազմը փոխել բռունցքի կռվի և միմյանց դանդը ջարդել ե դուրս թափել այնտեղից այն ուղեղը, որ հանդգնում էր սուրիշ կերպ դատել, քան թե իրենցը» (նույն տեղ, էջ 156)։

«Սերունդների պայքարի» հետ միասին Շիրվանզադեն նկատել է նաև սոցիալական խմբակցությունների տեղաշարժը։ Ինչպես և Մուրացանը, Շիրվանզադեն ևս նկատել է կալվածատիրական ազարակների մայրամուտը, «իշխանական դասի» քայքայումը և «փողի արիստոկրատիայի» հանդես գալը։ «Զուր հույսերի» մեջ Հալարյանի հարստությունը բարձր է համաքա

վում, քան իշխանական օազուսը։ Մուրացանի նման՝ Շիրվանզադեն ևս գավառը դակադրել է կենտրոնին. «ցարական պրովինցիան» երկուսն էլ հավարում են իրավազրկության և օրինազանցության ասպարեզ։ Մեր այսօրվա մայրաքաղաքը, Երևանը, որ Միության առաջավոր կենտրոններից մեկն է, մի քանի տասնամյակ առաջ ներկայացնում էր մի խուլ անկյուն։ Շիրվանզադեն հիշում է իր հերոսներից մեկի կարծիքը Երևանի մասին. «Պետերբուրգից հետո գնալ մի գյուղաքաղաքում ապրել—շատ ե շատ անտանելի է։ Ես այդ զգացի 8 ամիս Երևանում ապրելով։ Անհնարին է այնտեղ ապրել, կրթված մարդը կարող է բոլորովին խեղդվել լուսավոր օդի պակասությունից» («Երկեր», IV, 234)։ Լուսավոր օդի պակասության զգացումը շեշտելով՝ Շիրվանզադեն դրա հետ միասին, տվել է նաև իր, եթե կարելի է այսպես ասել, սոցիալական ուտոպիան, այն իրավակարգը, ուր նա կուզեր սիրով ապրել։ Նրա լավագույն հերոսներն ու հերոսուհիները երազում են ապագան, իսկ 1905 թ. ռևոլուցիայի ժամանակ նրանցից մի քանիսը փորձում են կենսագործել իրենց երազները։ Սամվել Շարբարչյանը ուզում է կանանց քաղաքական իրավունքներ տալ. «Կգա ժամանակ, երբ մեր գատավորները կանայք կլինեն», ասում է նա («Երկեր», V, 285)։ Շիրվանզադեն ցավով է հիշում 1905 թ. ռևոլուցիայի պատմությունը։ Նա ես, ինչպես և Մաքսիմ Գորկին, գայրացել էր ֆրանսիական բուրժուազիայի դեմ, որ ռուս կառավարությանը մի միլիարդ ռուբլի պարտք էր տվել ռևոլուցիան խեղդելու համար։ «Մաքսիմ Գորկին,—ասում է Շիրվանզադեն,—իր խիզախ ոճով գրեց մի ցասկոտ հոդված։ Այնտեղ նրա խորապես վշտացած գրչից շեշտակի սպրդել էր մի կծու գարձվածք՝ «Թքում եմ գեղեցիկ Ֆրանսիայի երեսին»։ Ամենքը գիտեին, որ թուքն ուղղված էր բուրժուազիայի և միայն բուրժուազիայի երեսին, բայց չէին ուզում խոստովանել։ Այս է պատճառը, որ ռեպտիլ մամուլը կատաղել էր համբավավոր բելետրիստի դեմ («Յանքի բովից», 2-րդ մաս, 83)։ Բուրժուազիային և ժողովրդին իրար հակադրելով, Շիրվանզադեն նշել է իր սոցիալական համակրանքը։ Այդ նույն բանն ավելի ցայտուն երևում է 1905 թ. ռևոլուցիայի ժամանակ տեղի ունեցած մի տխուր դեպքի—հայ-թուրքական ընդհարումների առթիվ։ «Ադետը տարածվեց ամենուրեք,—դրում է Շիրվանզադեն,—ուր միայն կար հայ-թուրքական հարևանություն։ Միայն իմ ծննդավայր Շամախին չենթարկվեց պրովոկատորների ջանքերին, չնայելով, որ հայերի թիվն այդ ընդարձակ գավառում թուրքերից տասն անգամ պակաս էր։ Ինչու։ Մի գուցե այն պատճառով, որ այնտեղ չկար ոչ հայ, ոչ թուրք ինտելիգենցիա, և ժողովուրդը դեկավարվեց իր բնական իմաստությամբ» («Երկեր», VIII, 287)։ Գրական գործունեությունն սկսելով Արծրունու «Մշակումից», տուրք տալով վերջինիս լիբերալիզմին, Շիրվանզադեն, իբրև խոշոր ռեալիստ, գարավերջին արդեն նկատում է, որ լիբերալիզմը դառնում է ռեակցիոն բուրժուազիայի ձեռքում մի աղավաղված հետադեմ ուսմունք, որի պատճառը վիրահաս իմպերիալիզմն էր և սրա հիմնավոր վախը պրոլետարիատի հանդեպ։ Ահա հենց այդ շրջանի բուրժուական դավանանքի համար է ասված լորձունեֆոտ լիբերալիզմ արտահայտությունը։ Շիրվանզադեի համար ռեալիզմը երբեք չի եղել սոսկ գրական ձև կամ պրիոմ, այլ գլխավորապես նորը տեսնելու, նորը զգալու և նորը ապրելու միտումն։ Կյանքի մեջ բեկում նկատելով, նա դարձել է այդ բեկման նովատորը։ Հենց այդ

պատճառով էլ մենք տեսնում ենք, որ նա էպոխայի բնութագիրը տալիս է հիմնական խնդիրների արծարծումով, որոնք հուզում էին առաջավոր մրաքերին։ Սխալ է Շիրվանզադեին «զուտ օբեկտիվ» գրող համարել։ Նա ցայտուն վերաբերմունք ունի իր նկարագրած էպոխայի գործող ուժերի հանգեպ։ Ո՞րն է բուրժուական հասարակության դիագնոզը, որ տվել է Շիրվանզադեն. ամեն ինչ վճռավում է. մոտ է փոթորիկը և նավաբեկությունը։ Չեխովի մահվան քառասունամյակի առթիվ Ն. Տիխոնովը ասել է. «Ուրբանական-ինտելիգենտական թվերի մարդիկ, ասես, թե ընկել են մի ինքնօրինակ հանրագիտարանի մեջ, այնպես նրանք լրությամբ են պատկերացված Չեխովի երկերի էջերում»։ Մի նման բան էլ Շիրվանզադեի մասին կարելի է ասել։

Ինչպես տեսնում ենք, Շիրվանզադեի ստեղծագործության մեջ էպոխայի բնութագիրը չի տրված միայն սիրո և կնոջ պրոբլեմով, ինչպես սխալաբար ասված է հայ քննադատության մեջ։ Բայց նույնիսկ եթե այդպես լիներ, Շիրվանզադեն կանանց հարցի միջոցով ևս քննադատել է բուրժուական քաղաքականությունը և ավելի լայն եզրակացություններին հանգել, քանի դա թույլ էր տալիս ամուսնության ինստիտուտի «ենեզ» սահմանները։ Շիրվանզադեն հայ նոր կնոջ հայտնագործողներից մեկն է, որ ստիպել է նրան նայել իր ներքին աշխարհին և որոշել իր տեղը հասարակության մեջ համաձայն իր հոգեկան տենչերին։ Նա մտել է կանանց պաշտպան այնպիսի գրողների շարքը, ինչպես Իբսենը, Իբերնսոնը և Հերբելը։ Դրա հետ միասին՝ հակադրվել է այնպիսի կնատյացներին, ինչպես են Շոպենհաուերը, Նիցշեն, Ստրինդբերգն ու Վայնինգերը։ Այդ համակրանքն ու հակակրանքը ի՞նչ եզրակացության են հասցրել նրան։ Ըստ Շիրվանզադեի՝ կնոջը անկախություն կտա միայն անձնական աշխատանքը, իսկ վերջինս անխափան կատարելու համար նա առաջարկում է փոխել սոցիալական պայմանները։ Այդ եզրակացությունը, հարկավ. Շիրվանզադեին չի դարձնում սոսկ «Ընտանիքի երգիչ» և նրա վիպասանությունը—«Ընտանեկան վեպ» (Շերերի տերմինն է)։ Այդ եզրակացությունը հերքում է նաև մի այլ արտառոց կարծիք։ Իբր թե Շիրվանզադեի նկարագրած կանայք «իրենց ամուսիններից պահանջում են շատ քիչ բան՝ որ իրենց սիրեն, այսինքն «ղրաղվեն» իրենցով, փայփայեն, հետաքրքրվեն, պատմեն նրանց իրենց գործերի մասին, վերջապես, չդավաճանեն։ Այդպես են Սվգինեն, Դայիանեն, Արմենուհին. եթե իրենց ամուսինները այդպես վարվեն՝ նրանք շատ գոհ կլինեն և չեն բողոքի։ Նրանց իդեալն է քաղքենական ընտանիքը։ Հոգով իրենց համարում են ոչ թե անկախ անձն, այլ տղամարդու լրացում և «կովում են» միայն «ասիականության» «վայրենի» կողմերի դեմ»։ Այս կարծիքը, թերևս, ճիշտ է, եթե նկատի առնենք Սրբուհի Տյուսաբին և նրա հերոսուհիներին։ Մինչդեռ Շիրվանզադեն շատ ավելի խոր մի հեռանկար է նպատակադրել, քան սոսկ քաղքենական ընտանիքը։ Նրա հերոսուհին պահանջում է «մի կտոր հացի» ապահովություն՝ աղատ ամուսնություն գլուխ բերելու համար։ Կնոջ տնտեսական անկախության պահանջը համատեղելի չէ քաղքենական իդեալների հետ։ Մաքսիմ Գորկին գրել է՝ «ամեն մի աղջիկ խեղդվող է. ծղոտից անգամ կբռնի»։ Շիրվանզադեն այդ խեղդվողների առաջ նպատակ է դրել. անկախ եղեք և չեք խեղդվի, այսինքն «տղամարդու լրացումը» չեք լինի։ Ճիշտ է, Շիրվանզադեն գրական գոր-

ծունեության սկզբում, «Մշակի» էջերում դնում էր կնոջ խնդիրը գեթ այսպես. «Ինչ եմ ես տղամարդու համար, բայց հետագայում նա ընդարձակեց կնոջ պահանջը—«Ի՞նչ եմ ես ինձ համար, Նրա նկարագրած կանայք—ամուսիններից դժգոհները—զգում են, որ իրենք շղթայված են և բողոքում են այդ շղթաների դեմ, Դա արդեն «ասիականության» «վայրենի» կողմերի դեմ ընդվզում չէ, այլ սոցիալական բողոք։ Ամուսնական դավաճանության կամ անհավատարմության խնդիրը ևս Շիրվանզադեն ավելի լայն է դնում, քան հաչվի է տոնում վերը հիշված արտառոց կարծիքը։ Էնգելսը գրում է. «Կաթոլիկ եկեղեցին անշուշտ միայն նրա համար վերացրեց ամուսնալուծությունը, որովհետև համոզվեց, որ ոչ մի դեղ չկա, ինչպես մահվան, այնպես և ամուսնական անհավատարմության դեմ։ Շիրվանզադեի ստեղծագործության մեջ այս իմաստուն թեզը հոյակապ գեղարվեստական պատկերացում է ստացել։ Շպիլհագենի վեպերից մեկում (Was die schwalbe sang) այսպիսի մի հարց կա, ո՞րն է դժոխքը,—պատասխան՝ այն ամուսնությունը, որի մեջ սեր չկա։ Սիրո չգոյության խնդիրն ևս Շիրվանզադեի մոտ շատ ավելի հասարակական չարիքի բնույթ ունի, քան սոսկ «Քաղքենական ընտանիքի» խնդիր է։ Շիրվանզադեն պատմել է խանդի հողի վրա սպանության փորձի մասին, ինչպես և այն կանանց մասին, որոնք թողնում, փախչում են իրենց անառակ ամուսիններից։ Հասարակական չարիքը շատ հին պատմություն ունի։ Ինչպես երևում է, հին Հայաստանում ևս խանդի հողի վրա սպանությունը հանցանք չի համարվել։ Եզնիկը գրում է. «Զորժամ զըմբռնեալն ի շնության ոք սպանանիցէ պատուհաս ի վերայ ածեալ վասն յանդգնութեանն, չառնէ չար ինչ»։ Մի փաստ ևս բնորոշ է. Արշակավանի մեջ, ըստ Բյուզանդի, պատըսպարան են դառնում ե որոշ տիպի կանայք, որոնք թողնում են իրենց ամուսիններին և գալիս բնակություն հաստատում Արշակի նորակերտ քաղաքում. «Բազում կանայք զարս թողուին, և անդր անկանէին»։ Խանդի հողի վրա Բյուզանդի Տրդատ Բագրատունին իր կնոջ՝ Երանյակի մազերը կտրում է և տանից վռնդում։ Եթե Շիրվանզադեի Մելանիայի ամուսինն էլ նույն ձևով է վարվում, ապա այդ նմանությունը սոսկ ցույց է տալիս, որ Շիրվանզադեն խոսել է կնոջ դարավոր ստրկության դեմ ոչ թե մեշչանական մի սահմանափակ իդեալ պաշտելու, այլ «մարդակերների քաղաքակրթության» դեմ ծառանալու համար։ Շիրվանզադեի Լիդիան ասում է դատարանում. «Իմ ամուսինն ինձ դավաճանել է, այո, բայց ղղջացել է, և ես ներել եմ նրան ամբողջ հոգով։ Ո՞նչ եք կամենում, որ ատեի նրան, արհամարհեի, զզվեի և փախչեի նրանից։ Ներեցեք համարձակության, եթե դրանով խնդիրը լուծվեր, այն ժամանակ ոչ մի կին չպիտի մնար իր մարդու եարկի տակ» («Երկեր» III, 337)։ Հիշում եք Էնգելսի խոսքը—բուրժուական ընտանիքում անհավատարմությունը մահվան պես անխուսափելի է։ Անխուսափելի է, որովհետև կինը ստրուկ է։ Հարց է այդտեղ սկսած Բաղդասար Ահրումյանի «ասիական» «վայրենի» ընտանիքից մինչև Անտոն Իհգմուրյանի «եվրոպական» «կրթված» ընտանիքը։ «Գիշուլումը (=Բաղդասարի կինը) նայում է (մեռնող) ամուսնուն դառն վշտակցությամբ և գլուխն անգոր երերում։ Մսան տարի կենակցել էր այդ մարդու հետ, քսան տարի շարունակ գտնվել էր նրա պողպատյա բռնակալության ատակ, որպես գրնված ստրուկ, ճանաչել էր միայն և միմիայն նրա կամքը, հպատակվել էր

միայն և միայն նրա ետին, միշտ խեղդելով իր մեջ սեփականը» («Երկեր», I,126)։ Կրթված Անտոնն ևս կնոջը՝ Հերսելիին զգալ էր տալիս, որ նա սոսկ մի «գնված ստրուկ է». «Տունն իմն է և միայն իմը, իսկ դուք... դուք նրա մեջ... տնտեսուհի եք առանց իրավունքների։ Եվ դեռ այդ պաշտոնն էլ Ձեզ համար, ինչպես տեսնում եմ, շատ է» («Երկեր» V, 149)։ Նատալյա Պետրովնան, «Արամբրին» վեպի հերոսուհիներից մեկը, տեսնելով Վասվաոեի տանջանքները, որ նա կրում էր չսիրած ամուսնու պատճառով, ասում է. «Խիստ դժվար են մեր օրենքները»։ Բայց դրանք խիստ են լոկ կնոջ նկատմամբ. բուրժուազիան տղամարդկանց համար «աղատ կարդ» է հաստատել «օրինավոր դավակ» ունենալու նկատառումով։ Ես խանդում եմ, ասում է Սարինգբերգը, որովհետև կինս գիտե թե գավակս ումից է, իսկ ես չգիտեմ։ Որպեսզի հաստատ իմանա, կնոջ համար ստեղծում է վանդակ, իսկ ինքը աղատ թռչում, ուր որ ուզում է. «Օրենքը» պաշտպանում է տղամարդուն. Պյոտր Սոլոմոնիչ Բախտանովն իր օրինավոր կնոջն ասում է. «Եթե հանդգնի տնից ոտն դուրս դնել՝ ոստիկանության միջոցով, օրենքի և եկեղեցու անունով, հետ բերել կտա («Երկեր», III, 166)։ Բարաթյանն այդ օրենքի և եկեղեցու փաստաբանն է, որ իր կնոջը՝ Գայիանեին բացատրում է տղամարդու և կնոջ միջև եղած ահռելի տարբերությունը... հասարակաց կարծիքի առաջ. «Տղամարդի մեղքը ամենքի համար սովորական բան է,—ասում է Բարաթյանը,—իսկ երբ կնոջն են բամբասում, թեկուզ դուր տեղը... այն ժամանակ վայ ընտանիքի պատվին։ Մեր մեղքերը մեղ ներվում են, իսկ ձեր մի սխալը—երբեք։ Այս բանը լավ հասկացեք» (նույն տեղ, էջ 201)։ Մի ուրիշ Բարաթյան—Անտոն Բեզմուրյանը բացարձակապես պնդում է, որ կնոջ ասպարեզը հայտնի չորս պահանջով է սահմանափակվում—առանձնապես մանկատնով և ննջարանով. արդ ու զարդն ու եկեղեցին՝ ինքնըստինքյան հասկացվում է։ Հարկավ, այդ նեղ հասկացողության դեմ Շիրվանզադեն գրել է կնոջ էմանսիպացիայի խնդիրը այն լայն առումով, թե կինն ևս հասարակական մարդը կարող է թևակոխել՝ առանց դադարելու մայր և ամուսին լինելուց։ Դժբախտաբար այս խնդրում Շիրվանզադեի մեթոդի և հայեցողության մեջ ճեղքվածք է ստեղծվել «Ուներ իրավունք» դրամայի կապակցությամբ։ Նա իր դրամայի համար մի «Բացատրություն» գրեց, որում կնոջ երջանկությունը հայտարարեց իբրև մի հոգեկան ներքին զգացում, ինքնաբավ ապրում, որ դրսի աշխարհի հետ կապ չունի։ Եթե այդ «ներքինը» չկա, ոչ մի «դրսի» գործողություն չի կարող կնոջը բավարարել։ Իր այս պնդումն այնքան անարկելի էր համարում Շիրվանզադեն,—որ հակառակ կարծիք հայտնողներին արհամարհանքով անհող «բարոյախոս» է անվանում։ «Թող բարոյախոսները,—գրում է նա, ընտանեկան կյանքով չբավականացող կանանց հրավիրեն «հասարակական գործունեության» ասպարեզը և բարձրաձայն գոռան ու հավատացնեն, թե այդտեղ նրանք կարող են գտնել անհատական երջանկություն»։ Ո՛չ. այդտեղ չէ երջանկությունը։ Ապա որտեղ է։ «Եթե կա կնոջ հոգում սեփական անհատական երջանկության գիտակցություն՝ տոգորված անձնական ինքնուրույնության զգացումով—նա երջանիկ է» («Երկեր», V, 178)։ Շիրվանզադեի այս արտառոց պնդումը հիշեցնում է Տոլստոյի հայտնի «Երկնքի արքայությունը, Ձեր ներսն է» մաքսիմը, որ ռուս երկրի մեծ գրողը հերքել է իր գեղարվեստական ստեղծա-

գործությամբ, դառնալով как зеркало русской революции. Այդպես է նաև Շիրվանզադեն. ինքը իր գեղարվեստական ստեղծագործությանը ջրել է իր անհիմն թեզը։

Անառակության, պոռնկության խնդիրը դնելու ժամանակ Շիրվանզադեն հարցը չի բացատրում կնոջ ներքինով, բիոլոգիզմով, ինչպես երջանկության բաժնում, այլ հաշվի է առնում սոցիալական կողմը և հակադրվում է Լոմբրոզոյին, որ պրոստիտուցիան մեկնում էր իրրև բնախոսական երևույթ։ Հանդիպելով պոռնիկ Էմիլիային՝ Շիրվանզադեի մտքովն անցնում է. «կարծես մի աներևույթ ձեռք նրա ապականված մարմինը սքողեց ոսկե շղարշով։ Նույն վայրկյանին իմ մեջ ծագեց մի բուռն կարեկցություն, ես հիշեցի Դոստոևսկու Մարմելադովի պատմվածքն իր տղջկա մասին։ Գուցե Էմիլիան էլ ունի մի արբշիռ հայր և կարիքից հարկադրված իր անմեղությունը վաճառել է մի սինլքորի ու շարունակելով, վերջը ընկել է պոռնկատուն» («Երկեր», VIII, 147)։ Շիրվանզադեն պոռնկության պատասխանատուն համարում է «ժարդակերների քաղաքակրթությունը», պոռնիկ կանանց նկատում է իրրև «բուրժուական աշխարհի հավիտենական (?) զոհեր», որոնց հղփացած արդյունաբերական քաղաքը շպրտել է իր պճնազարդ բուլվարների վրա, «կանխավ քամելով նրանց թարմ հյութը, ճիշտ այնպես, ինչպես վամպիրն է ձգում իր զոհին, երբ արդեն կշտացել է նրա արյունով» («Կյանքի բոլից», 2-րդ մաս, 14)։ Շիրվանզադեն նույն բուրժուական աշխարհի կարդ ու սարքով է մեկնաբանում նաև ընտանեկան կյանքի մի այլ կողմը, սիրո մի ինտիմ անկյունը—խանդի զգացմունքը։ Ընտանեկան դրաման, անհավատարմությունը, ինչպես և խանդը, ըստ Շիրվանզադեի, միևնույն «չարիքի» տարբեր նյուանսներն են։ Բուրժուական աշխարհում ընդունված է, որ տղամարդն ապահովվի տնտեսապես և ապա ամուսնանա, բայց դա ժամանակ է պահանջում, աղամարդը տարիք է առնում, հաճախ ծերանում է և հետո ամուսնանում։ Այդ դեպքում նա ընտրում է «ջահել և սիրուն» կնոջ, երբ ինքն արդեն քամված լիմոն է կամ, ինչպես ասում է Մուրացանը, «կատարյալ ավերակ»։ Շիրվանզադեն տվել է ցնցող նկարագիրներ, թե ինչպես է խանդոտ ամուսինը տանջում իր ջահել կնոջը, նրան փակում, մի «նոր հարեմ» ստեղծում նրա համար, որպեսզի վսահ լինի, թե իր հարստությունը սեփական դավակն է ժառանգում և ոչ թե մի «բիջ» կամ ապօրինի «վիժվածք»։ Ինչպես և Օստրովսկին, Շիրվանզադեն տվել է «Անմեղ մեղավորների» տրագեդիան, որի համար նա դարձյալ պատասխանատու է համարել տիրող ռեժիմը և ոչ թե որևէ «անհատական» կամ հոգեկան մոմենտ։

Ամփոփենք։ Շիրվանզադեն, իրրև խոշոր գրող, որի դրական ստեղծագործության բուռն վերելքը տեղի է ունեցել բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի նախօրյակին, չէր կարող չդնել և իրոք դրել է այդ ռևոլուցիայի մի քանի հիմնական խնդիրները։ Որոնք են բուրժուա-դեմոկրատական ռեոլուցիայի այդ խնդիրները, որոնք են նրա ստեղծագործության և տիպերի ընդգրկած էպոխայի ակտուալ պրոբլեմները։

Ամենաառաջին պրոբլեմը կամ բոլոր պրոբլեմների սինթեզը—մաքրել հասարակությունը միջնադարյան մնացուկներից, մաքրել առանձնապես հետևյալ կոնկրետ հարցերում — բյուրոկրատիա, դասային կառուցվածք, եկեղեցի, գյուղացու և բանվորի դրությունը, ազգային ճնշումներ և վերջա-

պես, կնոջ ազատություն։ Ինչպես հայտնի է, այդ բոլոր խնդիրները արժատապես չեն կարող լուծվել բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի միջոցով. պատճառը՝ մասնավոր սեփականության ինստիտուտի անձեռնմխելիությունն է։ Հատկապես կանանց հարցի մասին Լենինը գրել է. «Ուր կան կալվածատերեր, կապիտալիստներ, առևտրականներ, այնտեղ չի կարող լինել կնոջ և տղամարդու հավասարություն, նույնիսկ օրենքով։ Ուր չկան կալվածատերեր, կապիտալիստներ, առևտրականներ, ուր աշխատավորության իշխանությունը առանց այդ շահագործողների նոր կյանք է կառուցում, այնտեղ կա կնոջ և տղամարդու հավասարություն օրենքով»։